Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 116 — ԵՐԵՔՇԱԲԹԻ 22 ՄԱՅԻՍ 1884 (Ն. Տ.) 3 ՅՈՒՆԻՍ — 9 ՇԱՊԱՆ 1301

ԳԱՅՄԱՆԸ
Փոխադրման տոմսը մէկ անգամի համար 3 զուրուշ. երկու անգամի համար 2 զուրուշ է. աւելի անգամներու համար զատ զատ կարգութիւն կը լայ։
Օրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն պէտք է ուղղել՝
«Առ խմբագրատիւն ԱՐԵՒԵԼՔ օրագրի»
ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. Գալաթիա, Նորատունկեան խան։
Իսկ գաւառներէն հետեւեալ հասցէին՝
{ كلوءارا } درعاده غلطه خانك نورادونكيان
غزته اداره سى

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ	համար	Տարեկան	դահեկան	արծաթ.....200
»	»	Վեցամեայ	»	» 100
»	»	Եռամեայ	»	» 50
»	»	Ամեայ	»	» 20
»	»	Հատով	»	» 1
Գաւառաց	համար	Տարեկան	»	» 240
»	»	Վեցամեայ	»	» 120
»	»	Եռամեայ	»	» 60
Օտար	երկիրներ	Տարեկան	Ֆրանք	 56
»	»	Վեցամեայ	»	 28

Դուրս ղրկուած լրագրոյ համար ծախքը խմբագրութեան վրայ է։

40 ՓԱՐԱ

Կ. ՊՈԼԻՍ
ԵՐԵՔՇԱԲԹԻ 22 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ ԿԱՆԱՆՑ

Անգլիոյ Երեսփոխանաց ժողովին ի մօտոյ վէճը պիտի ասոյ սա խնդրոյս վրայ թէ, կինէրն ալ պէտք է՞ միթէ իրաւունք ունենան քուէ տալու Երեսփոխանաց ընտրութեան։ Իգական սեռն ընտրական իրաւանց մասնակից ընել ուզողներ այս պահուս Լանքեր կ'ընեն իրենց դատին նպաստաւոր վճիռ մը ստանալու։ Մէջերնիներ կազմեցին, բանախօսութիւններ ըրին, որոշումներ քուէարկեցին, աղերսագրեր ներկայացին Խորհրդարանին, և ամէն կերպիւ աշխատեցան ազդեցութիւն յառաջ բերել թէ՛ Նախարարութեան և թէ՛ Խորհրդարանին վրայ։ Յարգ. Պ. Կլատսդոնի Նախարարութիւնը նպաստաւոր ընդունելութիւն մը չբրաւ։ Այս անգամ Պ. Ուսօլ Երեսփոխանն է որ ժողովին մէջ պիտի պաշտպանէ կանանց իրաւունքն, և Լոնտոնի լրագիրը կ'իմանան թէ Նախարարը Պ. Ուսօլի առաջարկին պիտի ընդդիմանան սա առարկութեամբ թէ, եթէ ընտրական իրաւունքն իգական սեռին վրայ ևս տարածուի, արդի Ընտրական Ծրագիրը Խորհրդարանի երկու ժողովներէն քուէարկուելով օրէնքի այժ չպիտի կրնայ ստանալ, և ծրագիրը մը պիտի մնայ միշտ։ Բայց թէ Խորհրդարանն ինչ դիրք պիտի բռնէ Պ. Ուսօլի առաջարկին նկատմամբ, մի քանի օրէն պիտի տեսնենք։ Այս նկատմամբ Թայմս կը գրէ մայիս 23 թուով. «Կանանց իրաւանց պաշտպաններն ի յաւագովութիւն Պ. Ուսօլի առաջարկին շատ բաներ ունին ըսելու։ Անոնց դատն աշխարհի առջեւ լիովին բացատրուած է արդէն, և Խորհրդարանին մէջ պիտի պաշտպանուի նոյն փաստերով ու հեւտորական կոչումներով, որոց վարժուեր ենք երկար ժամանակէ հետէ, բայց վերջին ժամանակներս առաւել յաջող ընթացք։ Ի մէջ բերուած փաստեր բաղմաթիւ և զանազան են, և զանազան առաջարկներ ապացուցանելու կը ծառայեն։ Տուրք վճարել և Երեսփոխան ունենալ՝ ի միասին ընթացող քաղաքային հանգամանքներ են։ Արդ, կանայք տուրք կը վճարեն։ ուրեմն Երեսփոխան ընտրելու իրաւունքն ալ պէտք է ունենան։ Նոքա ձեռնհաս քաղաքացիներ են, —կարողութեան եթէ ոչ օրէնքի տեսակէտով,—և իրենց ձեռնհասութեան փոխարէն տուած են այն եղանակաւորով կատարած՝ արդի օրէնքը իրենց սահմանուած հանրային և անհատական պարտաւորութիւնները։ Կանայք կը հարցնեն թէ ինչո՞վ ստորին են հողագործներու և քաղաքային գործաւորներու հոծ բազմութիւններէն, որք հաղիւ կրնան իրենց անունը գրել, բայց և այնպէս ընտրական իրաւունք պիտի ստանան, մինչդեռ բարեկիրթ և դարգացեալ կանայք, որք ստացուած գիտութիւն, կամ մեծ և բարեկարգ ընտանիքներու գլուխ, զուրկ կը մնան նոյն իրաւունքէ։ Ասոնք և այս պիսիք են գլխաւոր փաստերն, որոց վրայ կը յենուի կանանց ընտրական իրաւանց դատն։ Եթէ այդ փաստեր բանի մը կը ծառայեն, ներկայացեալ առաջարկին շատ աւելի բաներու ալ կրնան ծառայել։ Եթէ քաղաքական արդարութեան սկզբունք մ'է որ այրի կամ անկոխ կանայք, որք տան մը գլուխ կը համարուին, երեսփոխան ընտրելու իրաւունք ունենան, որովհետև սկզբամբ նոյն իրաւունքը կրնանք մերժել ասոնց ամուսնացեալ քոյրերուն։ Եթէ կանայք կրնան քուէ տալ երեսփոխան ընտրելու համար, ընդէ՞ր չպիտի կրնան երեսփոխանաց ժողովին մէջ իսկ բազմիլ, և իրրեւ օրէնսդիրներ՝ Աղդին շնորհել լիուլի այն ամէն ձիրքերու օգտուանելն, որովհետև օժտեալ կը համարին զինքեանս։ Ջատագովք կանանց իրաւանց կոչում պէտք է ընեն ոչ թէ լոկ բացարձակ արդարութեան, այլ մանաւանդ պատշաճութեան, յարմարութեան, և այս հիման վրայ տարակոյս չունինք բնաւ թէ ինչ պատասխան պարտի տրուիլ Պ. Ուսօլի առաջարկին, ո՛րպիսի ձեւայ ներքեւ ալ ներկայանայ։

«Կառավարական ծրագիրն, իւր արդի վիճակի մէջ, յոյժ ընդարձակ ծրագիր մ'է ժողովրդեան ընտրական իրաւունքն աճեցնող։ Իբր երկու միլիոն նոր քուէարկուներ պիտի աւելցնէ ընտրողաց տումարին վրայ, բայց չպիտի աւելցնէ դաս մը որ արդէն ներկայացեալ չէ ընտրողաց տումարին մէջ։ Կառավարական ծրագիրը քայլ մ'է դէպ յառաջ, բայց քայլ մ'է նախկին հետքերուն վրայ։ Վճիռ արձակել ի նպաստ ընդունելութեան կանանց, բոլորովին նոր բան մը կը լինի, որ անծանօթ է թէ՛ Անգլիոյ մէջ և թէ՛ աշխարհի ուրիշ որ եւ է կողմն։ Եթէ այդչափ հիմնական փոփոխութիւն մը պիտի լինի, լուրջ որոշողութեամբ պէտք է լինի, և ո՛չ թէ միջադէպի մը ձեւով, կամ կուսակցութեանց դիպուածական համաձայնութեամբ մը, որք այս խնդրոյս մէջ ո՛չ երկրին ընդհանուր կամքը կրնան ներկայացնել, ոչ ալ նոյն իսկ կանանց կամքն։ Եթէ Պ. Ուսօլի առաջարկին Անգլիոյ ընտրողաց քուէին ներկայացուի, ընդունելութիւնն անհնար լինելու չափ քիչ հաւանականութիւն ունի յաջողման։ Ընտրողք պիտի մերժեն զայդ առաջարկ, որպէս արժան է, և հաւանօրէն առաւել հեգնալից ձեւով մը պիտի մերժեն որչափ վայել չէ։ Իսկ Երեսփոխանաց ժողովն աւելի բարեացակամ պիտի լինի Պ. Ուսօլի ներկայացուցած դատին։ Զենք կարծեր թէ Երեսփոխանութիւնն հաւանութիւն տայ, բայց շատ Երեսփոխաններ կրնան հաւանիլ որ Պ. Ուսօլի առաջարկին այժ տալու մասնաւոր պատճառներ ունին, առանց ի նկատ առնելու բուն խնդրոյ առաջարկին արժանիքը։ Վարդապետական (գոտրինէ) դաստն այս առաջարկ ընդունելի է ինքնին, իբրեւ փորձ մը որ ցոյց պիտի տայ թէ մարդ մը վարդապետական գաղափարներ ունի թէ ոչ։ Պ. Կլատսդոնի Ընտրական ծրագրին հակառակորդները, Կառավարութենէն խնացած լինելով թէ, Պ. Ուսօլի առաջարկին ընդունելութեամբ, Ընտրական ծրագիրը չպիտի կրնայ քուէարկուիլ, ճիշդ այս պատճառաւ կրնան քուէ տալ ի նպաստ Պ. Ուսօլի առաջարկին։ Տիկնայց փոքրիկ խումբն, որք յիշատակագիր մը ներկայացին առ Պ. Կլատսդոն և դիմաց հարիւրի չափ ազատամիտ կանանց, չեն կրնար համայն իգական սեռն ներկայացուցչի տիտղոսն ստանձնել։ Իսկ Պահպանողականք աւելի ազէկ դիտեն իրենց բարեկամութիւնը։ Դիտեն թէ կիներն ընտրական իրաւանց մասնակից ընելու առաջարկը քուէարկել՝ կուսակցական լաւ հնարք մը պիտի լինի, և իրենց արդի կացութեան մէջ, ամէն հնարքէ օգտուելու փորձութեան կրնան ենթարկիլ, բուսական է որ կառավարական ծրագիրն ի դերեւ հանեն։

«Թէ կանայք քաղաքային ուսումնական խորհրդոց (Սխոուլ Պոարդ) ընտրող և ընտրելի են, և նմանօրինակ տեղական իրաւունքներ կը վայելեն, ասոնք պատճառ չեն երեսփոխանական ընտրողութեան իրաւունքն ևս անոնց տալու։ Նախ, կանայք այսպիսի իրաւունք մը չեն խնդրեր։ Եթէ կանայք այդ փաստերն ունենային, — այսինքն եթէ ուզէին Երեսփոխանական ժողովոյ անդամներ ընտրելու իրաւունք ունենալ, — այս խնդրոյ վրայօք աւելի կը լսէինք։ Եթէ կանայք բանի մը պէտք ունենան, լաւ գիտեն թէ զայն ձեռք բերելու համար ի՞նչպէս պարտին գործել, և ի վերջոյ ձեռք կը ձգեն։ Արդէն ամէն ընտանիքի մէջ ձայն մ'ունին, զոր հաստատամտօրէն կը բարձրացնեն ի նպաստ այն ամէն բաներու որոց վրայ արդարեւ հոգ կ'ընեն։ Ոմանք ի կանանց կ'ուզեն քուէ մ'ունենալ, բայց ասոնք տկար փոքրամասնութիւնմ'են, և միայն իրենց անուամբ կը խօսին։ Եթէ իրենց դատ նուազ բացուիլ, նուազ նոր դատ մը լինէր, և եթէ բոլոր իգական սեռը քուէի համար նոյն եռանդ ցոյց տար զոր այժմ ցոյց կուտայ նոր գլխաբերներու համար, իրենց պահանջումն անդիմադրելի պիտի համարուէր։ Իրաց արդի վիճակին մէջ, այն սակաւաթիւ կանայք որք հանրային կենաց համար կոչում մ'ունին, կարող են հետեւիլ իրենց հակամիտութեան։ Բայց կանանց մեծամասնութիւնն այսպիսի կոչումմը չունի, և գոհ է այն կացութենէ՝ յորում կը գտնուի։ Իսկ եթէ քուէարկութեան իրաւունք տուսան, կանայք կարող չպիտի լինին պահելիրենց արդի հանդարտ վիճակ։ Մէն մի կուսակցութիւն անոնց մէջ պիտի մտնէ, փորձ պիտի փորձէ քան կարի բազմաթիւ կլիներ իւր դատին չահելու, և պիտի պարտաւորէ զանոնք մէկ կամ միւս կողմին յարելու բացարձակ յաստարարութեամբ։ Այս վրդովիչ արտօնութիւն երկար ժամանակ չի կրնար սահմանափակուիլ տնարի կամայրի կանայց։ Վասն զի որո՞վ սկզբամբ կամ արդարութեամբ ամուսնացեալ կանայք պիտի կրնան զրկուիլ նոյն իրաւունքէ։ Ցայնժամ մերժաւորեալ պիտի գտնենք ընտրողաց յաւելում մը ո՛չ թէ երկու միլիոն հոգւոյ, այլ մեծագոյն թուով մը,—բացարձակապէս անտարբ ընտրողներ, որք ըստ ամենայն երեւութի, զուրկ են իրենց այս նոր պաշտպան ամէն էական յատկութիւններէն։ Եթէ կանայք պանց հետ քուէարկեն, իրենց ընդունելութիւնը քաղաքականորէն անվնաս կը լինի։ Իսկ եթէ իրենց յատուկ ընթացք մը բռնեն՝ հակառակ արական վճռոյն, և ձեռնամուխ լինին նախարարութիւններ տապալելու, կամ արտաքին աշխարհավարութեան խնդիրներ որոշելու, կամ առարկելի օրէնքներ քուէարկելու, յայնժամ իրենց ազդեցութիւնն աւելի խնդիր կը վերցուցնէ, և կանանց այդպիսի ազդեցութիւն մ'ի գործ դնելու իրաւունքն ի վերջոյ ետ կրնայ առնուիլ։ Կանայք այնչափ զգայուն են որ այս տեսակ փորձութեանց մէջ մտնել չեն ուզեր, ո՛չ թէ իրենց այժմեան շրջանակէն դուրս ելնելով մասնակցել այնպիսի կուսակցութեան մէջ, որ իրենց համար հրապոյր չունի բնաւ, և որուն գիրենք բոլորովին անյարմար կը դգան արդէն։ Եթէ կանանց դատին չատագովները կ'ուզեն այրերն հանդարտեցնել, նախ կիները թող համոզեն, — բան մը, յորում մինչև ցարդ ի դերեւ ելած են իրենց ճգունք։

«Մինչ պատճառներ կան ընտրական իրաւունք տալու այնպիսի դասու մը, որ բնաւ ներկայացուցիչ չունի։ Այդպիսի դասու մը պէտքերն ու պահանջումներն ըստ արժանւոյն ի նկատ չեն կրնար առնուիլ Օրէնսդիր ժողովոյ մէջ կողմէ, յորում այդ դաս ձայն չունի բնաւ։ Հետեւապէս, հարկ կը լինի ներկայացուցիչներ ընդունիլ այդ դասէն, որպէս զի ձայն ունենայ Խորհրդարանին մէջ։ Բայց կանանց համար չի կրնար ըսուիլ թէ Խորհրդարանին մէջ ներկայացուցիչ չունին։ Անոնք չունին պահանջում մը որուն Խորհրդարանն ուշադրութիւն չընծայէ, զի Խորհրդարանը կազմուած է իրենց հայրերէն, ամուսիններէն և եղբայրներէն։ Թէ արդի Օրէնսդիր մարմնոյ տուած որոշումներն և հաստատած օրէնքները կանանց նպաստաւոր եղած են՝ այնչափ ստոյգ է որ չի կրնար ժխտուիլ։ Կանայք այժմ առանց հետ նոյն իրաւունքը կը վայելեն ստացուածքի մասին, և ամուսնացեալ վիճակի մէջ իսկ իրենց յօժարկամութիւնքն է որ կրնան զրկուիլ այդ իրաւունքէ։ Եթէ դանդաղելը բան մ'ունենան, կրնան արտայայտել այն փաստութեամբ թէ իրենց խնդիրը նպաստաւոր կերպիւ պիտի դատուի։ և եթէ կշիռը մի կողմ հակի փոքր մ'ինչ, առաւել իրենց կողմն պիտի հակի քան հակառակ կողմը։ Ճշմարտութիւնն այս է սակայն թէ կանայք այժմ դատ մը չունին, և կատարելապէս գոհ են որ իրերն արդի վիճակին մէջ մնան։ Ուստի, Պ. Ուսօլի առաջարկին բախտը տարակուսական չէ։ (Թայմս ըսել կ'ուզէ թէ պիտի մերժուի)։ Այդ առաջարկ ընդունելիս պիտի մերժուէր եթէ փոխանակ ամբոխ վճռոյն ներկայացուելու, կանանց մեծամասնութեան որոշման ներկայացուէր։»

Թայմս մայիս 27 թուով կ'ըսէ թէ Ընտրական Ծրագրին յօդուածներն Երեսփոխանաց ժողովոյ մէջ հեւոգնութեամբ քուէարկուելու վրայ են, և թէ կարգն եկած է քննելու մասնաւոր Երեսփոխանաց կողմէ առաջարկեալ նոր յօդուածներն։ Ասոնց մէջ, կ'ըսէ, ամենէն աւելի միտք յուզեցողն է Պ. Ուսօլի առաջարկած յօդուածն, որ ընտրական իրաւունք կուտայ կանանց ևս։

«Կը ծանուցուի թէ Կարդ մը նշանաւոր Պահպանողականներ, ընդ որս Աբր Սթափորդ Նորթքօդ, ի նպաստ Պ. Ուսօլի առաջարկին քուէ պիտի տան, և թէ Լորտ Սալիսպըրի և Լորտ Գէրնս Լորտերու ժողովոյն մէջ պիտի պաշտպանեն զայն(*)։ Ամենէն աւելի հետաքրքրաշարժ լուրը սա՛ է թէ Տիկին Սալիսպըրի, Տիկին Գէրնս և Տիկին Նորթքօդ ներկայ պիտի գտնուին հանրային տէրէնէի մը, որ պիտի դումարի այժ տալու համար նոյն առաջարկին։ Երբ այսպիսի արտաստոր միջոցներ ձեռք կ'առնուին՝ կուսակցական մեծ չահու մը ակնկալութիւն պէտք է լինի. բայց Ընդդիմադիր կուսակցութեան հաւնները յայտնի չեն մեզ»։

(*) Ասոնք են Պահպանողական կուսակցութեան պաշտօնական Գլուխները։
Ծ. Խ.

ՔԱՂՈՒԱԾՔ
ԵՐԻՒՆԻ ՍՈՒՐՀԱՆԴԱՒԵՆ
—o—
ԴԵՍՊԱՆԱԽՈՐՀՈՒՐԴ

Վերջապէս, Դեսպանախորհրդոյ վրայ փոքր ի շատ ստոյգ տեղեկութիւններ ունինք։ Անգլիա և Ֆրանսա համաձայնելու վրայ են, և այս համաձայնութեան գլխաւոր գիծերը ծանօթ են արդէն։ Անգլիա երկու բարեւոր սկզբունքներ ընդունած է. մին է՝ Եգիպտոսի եվրոպական հսկողութեան կամ տնտրելի մը ենթարկիլ. միւսն է որոշ պայմանաժամ մը սահմանել անգլիական զօրաց Եգիպտոսս մնալուն, յորմէ յետոյ մեկնին երկրէն։ Բանակցութեան առարկայ եղած կէտերն են այժմ՝ անգլիական գրաւման ճիշդ տեւողութիւնն, և սա կէտ թէ՝ յիշեալ եւրոպական հսկողութիւնն անմիջապէս պիտի սկսի՞, թէ անգլիական զօրաց քաշուելէն յետոյ պիտի հաստատուի։ Այս է Թայմսի տեղեկութիւնը։ —Բէօնիչէ Զայտուէ ալ նոյն տեղեկութիւնը կը հրատարակէ։ Գերմանական թերթը կ'ըսէ թէ անգլիական դահլիճն համոզուած է զիջումներ ընելու հարկաւորութեան, և Խորհրդարանին կողմէ ընդդիմութիւն գտնելու երկիւղը միայն վարանում կը պատճառէ նմա։ —Ուրիշ իրազեկ թերթ մը, Բուլէթէյնի Ռոբէարտ՝ կ'իմանայ թէ հաստատուած է միջազգային հընկող մարմնոյ մը յանձնել նեղոսի հովտին մէջ եւրոպական չահուց պաշտպանութիւն, և թէ լիազօրք յանկիս ամսոյ մէջ պիտի գումարին ի Լոնտոն՝ այս հիման վրայ բանակցելու։ —Բէլ Մէլ Կազէթ կը ճշդէ այս տեղեկութիւններ։ Կ'ըսէ թէ անգլիական դահլիճը նախընթաց շաբաթ օր ուրբաթ ընդունիլ ֆրանսական առաջարկներն, որք էին՝ անմիջական հաստատում միջազգային հսկող մարմնոյ մը, որ Եգիպտոսի եղեւմտեան վրայ գերագոյն իշխանութիւն պիտի ունենայ, և երկու տարիէն անգլիական զօրաց մեկնումն յեգիպտոսէ։ Այս անգլոյ-ֆրանսական կարգադրութիւն միւս տերութեանց հաւանութեան պիտի ներկայանայ, և Բէլ Մէլ Կազէթ, որ դժգոհ է Պ. Կլատսդոնի այն զիջումներէն, կը յուսայ թէ տերութիւններէն միոյն կամ միւսին ընդդիմութեամբ այդ կարգադրութիւն անգործադրելի կը մնայ։—Թայմս կ'ըսէ թէ անգլիական նախարարութիւնն հինգ տարուայ պայմանաժամ խնդրած է, բայց Ֆրանսա երկու տարի միայն կ'ուզէ տալ, և թէ հաւանօրէն երեք տարուայ վրայ համաձայնութիւն պիտի գոյանայ։

—Լոնտոն, 30 մայիս. Տեյլի Նիւզ Աստղայէն հեռագիր մը կը հրատարակէ, մայիս 14 թուով, Ծանուցանող թէ Հաւէշստանի թագաւորին զաւակն Աստվա հասեր է ուր է Հուէդ ծովակալը, բայց Յովհաննէս թագաւորը կ'ուզէ խորհրդակցիլ Ֆրանսայի և Յունաստանի հիւպատոսաց հետ, անգլիացի ծովակալին հետ տեսակցելէ առաջ։ Թագաւորը կը պնդէ որ Մասսվայի նահանգիտան իրեն եւ դարձուի։ Տեյլի Նիւզի թղթակիցը, նոյն հեռագրաւ, կ'ամբաստանէ իտալական հիւպատոսը թէ՝ Հաւէշստանի մէջ խաղ Ահմէտ Մուխթար փաշա։ Լորտերու ժողովին մայիս 27ի նստին մէջ Սալիսպըրի մարքիզն այս մասին տեղեկութիւններ խնդրեց Լորտ Կրանվիլէ, որ բացարձակապէս մերժեց պատասխանել։

Մանչեսթր Օրէնդրալ կ'ըսէ թէ յայտնի չէ թէ ո՛ր ատենն ստոյգ է Բէլ Մէլ Կազէթի լուրը թէ 15,000 թուրք զօրաց բանակ մը պիտի դրկուի ի Սուաստան, անգլիական կառավարութեան առաջարկութեամբ, զԹարդումատաստելու։ —Ալէքսանդրիոյ լրագիրը կը հաստատեն իսկ թէ այս բանակի հրամանատար պիտի կարգուի Դաղի Ահմէտ Մուխթար փաշա։ Լորտերու ժողովին մայիս 27ի նստին մէջ Սալիսպըրի մարքիզն այս մասին տեղեկութիւններ խնդրեց Լորտ Կրանվիլէ, որ բացարձակապէս մերժեց պատասխանել։

ՀԱՆԱՀԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ

ՖՐԱՆՍԱ. Բարիզ, 30 մայիս. Թերակղզոյը քուէարկեց Ֆրանսայի մէջ ամուսնաթողութեան վերահաստատման Ծրագրին հիմնական յօդուածը, Ծրագիր զոր ներկայացած էր Պ. Նաքէ երեսփոխանն, և որ անցեալ տարի քուէարկեցաւ Երեսփոխանաց ժողովին։

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱ. —Անգլիոյ Երեսփոխանաց ժողովոյ մայիս 26ի նստին մէջ, արտաքին գործոց խորհրդական Լորտ Ֆիձմորիս, պատասխանելով այն հարցման թէ, կառավարութիւնը տեղեկութիւն ունի՞ Սարախսի Ռուսիոյ թագուհոյն նկատմամբ, ըսաւ. «Այս խնդրոյ վրայ բանակցութիւնք տեղի կ'ունենան Անգլիոյ և Ռուսիոյ կառավարութեանց միջեւ, բայց այն տարիներն հասած չեն դեռ որ կարենամ յայտնել զայնս։ Թէհրանի անգլիական դեսպանը խնդրեց կուսոյ մեզ թէ, Սարախսի մէջ պատրող զրոյցի մը նպաստով, Ռուսաց ընդհանուր հրամանատարն անդ կուգայ՝ գրաւելու և Մերվի Թիւրքմէնաց յանձնելու գետին աջակողմը գրաւնուող հողերը»։ —Կալկադայէն մայիս 25 թուով առ Թայմս. Մերվի ռուս կառավարիչը հրաման տուաւ որ պարսիկ բանտարկեալք արձակուին։ Թիւրքմէնաց ձեռքէն առաւ այն թնդանօթներ զորս Թիւրքմէնները Պարսկներէն առեր էին 1860ի պատերազմին առեն։ Ռուսք բերդ մը կը կառուցանեն ի Քօշուդ-Խան-Գալէ, (Մերվի քաղաքը)։ Սարախսի Ռուսիոյ թագուհոյն լուրը մեծ տարաբերութիւն ըրաւ Հնդկաստանի կառավարութեան վրայ, որ ամէն ժամանակէ աւելի կը զբաղի Կեդր. Ասիոյ խնդրով։ Խօսք կայ թէ Մաքիրկեր զօրավարի առաջնորդութեամբ քանի մը անդլիացի սպայք Հերատ պիտի զրկուին իրաց ելքը դիտելու։ Անդլիացի Պէլ հաղարապետն Սարախս զրկուեցաւ։ Ռուս զօրքն արդէն մնած է ի Հին Սարախս։ Ռուս լրատուք կը տեսնուին Բանձէպի շուրջ։—Մոսկովէն Վէ գոմոսդի լրագրին մայիս 25 թուոյն մէջ, հանրածանօթ Պ. Խաղքոֆ որոշապէս կ'ըսէ թէ, թէև զրաւեալ Սարախս հինն է, և ոչ նորը, «Բայց տարբերութիւն իրօք մեծ չէ։ Մեք ամրապէս հաստատուած ենք Ասիանատանց սահմանագլխոց վրայ»։ Պ. Խաղքոֆ շատ գոհ է որ Անգլիա սկսած է փրկարար երկիւղ մը զգալ Կեդր. Ասիոյ մէջ Ռուսիոյ յառաջդիմութենէն։ Կը յանձնարարէ որ Ռուսիա մուտերմական յարաբերութիւններ տածէ Պարսկաստանի և Ասիանատանի հետ։

ՄԱՐՈՒ.—Մարիոի մէջ յուզում պատճառած է մայիս 26 թուով Բարիզէն եկած հեռագիր մը թէ, Մարոքի Ֆրանսական դեսպան Պ. Օրանէա Թանճէր (մայրաքաղաք Մարոքի) պիտի վերադառնայ զրաւաւորով մը, որուն պիտի հետեւի Ֆրանսական նաւատորմ մը։—Սպանիոյ թագաւորին ճառէն կ'երևայ թէ, Սպանիա ի հարկին զինու զօրութեամբ պիտի պաշտպանէ Մարոքի մէջ ունեցած շահերը։

ՌՈՒՍԻԱ.—Զարին հրամանաւ, պատերազմական և ծովային նախարարները, Մեծ-Դուքս Նիքոլա և ուրիշ մի քանի զօրավարք, ընդ նախագահութեամբ Մեծ-Դուքս Վլատիմիրի, յանձնախումբ մը կազմեցին՝ ցամաքային և ծովային զօրաց մէջ ոչնչականութեան տարածման եղանակը քննելու և առաջքն առնելու պաշտօնով։ Բեղրսպուրգէն մայիս 26 թուով առ Թայմս «Գաղտնական ձերբակալութիւնք կը կատարուին զրեթէ ամէն օր, և ուշադրութիւն դրաւելէ կը դադրին այլ ևս։ Մի քանի օր առաջ, խումբ մը ոստիկանք առաւօտուն յանկարծ մտան ի Բեղրսպուրգի հանրածանօթ պարկեշտ ընտանիքի մը բնակած տունն, և մինչ ամէն ոք դեռ կը ննջէր, ներքին սենեակները մտնելով, դուրս հանեցին և բերդը տարին ընտանեաց վարժուհին։ Այս ազջիկ դեռ առջի օր մտած էր նոյն տունը։ Բացատրութիւն չտրուեցաւ բնաւ։»— Բուլէթէյնի Ֆրանսիոյ կ'իմանայ Բեղրսպուրգէն թէ Ռուսիոյ Կայսրն ու Կայսրուհին, զահաժառանգ Իշխանին հետ ի մօտոյ երկարաւոր ուղեւորութիւն մը պիտի ընեն Ռուսիոյ Ներսերն։ Ուղեւորութիւնը Մոսկուայէն պիտի սկսի և մինչև Տոնի Խաչաձաց բնակավայրը պիտի տարածի։

ՀՆԴԿԱՍԱՆ.—Ֆրանսական կառավարութիւնն որոշած է սապէս վերակազմել հնդկաչինական թերակղզոյն մէջ իւր ըստացած նոր երկիրներն։ Անոնք և Թոնքին բուսական ժամանակ պիտի թողուին ինքնօրէն վիճակի մը մէջ, վասն զի կարգնական և վարչական միութիւն հաստատելու գործը դժուարութիւններ ունի առ այժմ։ Միայն քաղաքական տեսակէտով և բարձրագոյն վարչութեան մասին միա[illegible]

[illegible]

կերպութիւն պիտի հաստատուի։ Հընդկական թերակղզեայ հանրը ընդհ. կառավարիչ մը պիտի անուանի, դաւառական կառավարիչներով, որք անկախորէն վարելով հանդերձ իրենց դաւառները, ընդհ. վարչութեան և քաղաքական ուղղութեան մասին ընդհ. կառավարչին իշխանութեան ենթակայ պիտի լինին։ Այսպէս, դաւառական կառավարիչներ պիտի նստին ի Բոշնչին և ի Թոնքին, և դեսպաններ ի Բանկոտա և ի Լաոս, որք Ֆրանսայի հովանաւորութեան ներքև են։ Հնդկական թերակղզեայ Ֆրանսայի ընդհ. կառավարիչը պիտի նստի Հուէի մէջ, ուր միանգամայն Անամի կայսերմօտ Ֆրանսական դեսպանի պաշտօնը պիտի վարէ։ Թոնքինը Զինասանէն զատող սահմանագիծին վրայ յատուկ դաւառ մը պիտի կազմուի և զօրապետ մը կառավարիչ պիտի դրուի։ Գալով այս նոր ստացուած դաւառաց եկամուտներուն, քանի մը տարիներէ հետէ Ֆրանսական Հնդկաչինը ծախուց վրայ հաստատեց տարեկան 4,000,000 ֆրանքի աւելցութիւն մը կը բերէր։ Թոնքին, առևտրական առաւելութիւններ ընծայելէ զատ, տարին 10–12 միլիոն ֆրանքի կառավարական հաստատ պիտի բերէ դիւրաւ։ Այս եկամուտներով Ֆրանսա պիտի կրնայ մեծագոյն չափ կառավարիչներ ղրկել ի Հնդկաչին, որք կարող պիտի լինին բարձր դիրք մը բռնել և Ֆրանսայի ազդեցութիւնը բարձրացնել և համակրելի գործել նոր դրաւուած երկրի մը տակաւին անհամակիր ժողովրդոց առջև։

ԳՈՐԱՏՍՈՅ. — Գարատաղի իշխանը մեծ խնդութեամբ ընդունուեցաւ ի Փոտկրիցա։ Ի պատիւ իւր սրուած հացկերոյթի մը մէջ, նկերաբ իշխանը բաժակ պարպեց Վ. Հ. Սուլթանին կենաց, Գարատաղի այն բարի դրացւոյն կենաց, որոյ բարեկամութիւնը մեծապէս կը գնահատենք։» Օմ. դեսպանն յայտնում Նիքոլա իշխանին կենաց բաժակ պարպեց։ Գարատաղի դեսպանն ի Կ. Պոլիս դեսպասխան չէ ստացեր իւր վերջին ծանուցագրոյ, ի մասին սահմանագիծոյ գրծման։ Դեսպանը կ'առաջարկէ որ Գարատաղ և Թուրքիա միասին լայնցեն և խորտնկցնեն Պոյանա գետին ջրանցը։

ԳԵՐՄԱՆԻԱ. — Պիզմարք իշխանն ուրոյշ կը թուի գաղթականական տերութեանց կարգը ներմուծել Գերմանիան։ Նորդ Տոյչ Ալգեմայնէ Զայթունգ այս պատմական իրողութիւնը կը ծանուցանէ հրատարակելով Պիզմարք իշխանին Բարլինուն ղրկած հեռագիրը, որ ընթերցողը տեսան մեր երեկի Բաղաւառոց մէջ։ Անկրա-Բէքուէնա, որոյ վրայ Գերմանիա իւր հովանաւորութիւնն հաստատած է, Պրէմբաղաքի առևտրական տանմը կողմէ անցեալ տարի գնուած էր Նամաքաներու ցեղին մէկ գլխէն, երիս տարիւր ոսկւոյ և մէկ հարիկ հրացանի մը փոխարէն։ Այս կերպիւ Գերմանիոյ անցած եղաւ Անկրա Բէքուէնայի ծովեզերքը, շրջակայ երկիրներով։ Անկրա Բէքուէնա կը գտնուի Ափրիկէի հարաւային արևելեան եզերաց վրայ, հարաւային լայնութեան 24 րդ աստիճանին մօտ, Բարեյուսոյ Հրուանդանի անդլիական ստացուածոց հիւսիսային սահման եղող Օրանժի գետին և Գէնկուալոյի Բորդուկէզ ստացուածոց մէջ տեղը։ Բարեյուսոյ անդլ. գաղթականութեան կառավարութիւնը քանիցս ուզեց տիրել Անկրա Բէքուէնայի, բայց Լոնտոն չհաւանեցաւ։ Լորտ Կրանվիլ ծանոյց վերջերս թէ, Անդլիա և Գերմանիա կը բանակցին այս մասին, բայց բան մը ցոյց չի տար թէ Գերմանիա վերհայտնական իշխանութիւն կ'ուզէ հաստատել այդ երկրի վրայ։ Պիզմարք իշխանին հեռագիրն, անգլ. դահլիճին աչքը բացած պէտք է լինի։ Թուսնուզի գերմանական հիւպատոս Պ. Նաթթիկալ Հարաւային Ափրիկէ կ'երթայ գերմանական նոր ստացուածքը կազմակերպելու։ Այսպէս ուրեմն, նոր տերութիւն մ'ալ ուր կը կոխէ Ափրիկեան հողին վրայ, որուն համար Վիքտոր Հիւգոյ քառորդ դար առաջ մարգարէացած էր թէ, «եւրոպական քաղաքակրթութեան հաստատման համար նոր աստարէզ մը պիտի լինի տասն և իններորդ դարու վերջին մասին մէջ։» — «Գաղթականութեան տարածման գերմանական ընկերութիւնն» ազդուապէս կ'աշխատի գերմանացի գաղթականներ ղրկել Հարաւային Ափրիկէ։ Այս ընկերութեան մէկ ընդհ. ժողովոյն մէջ, հիւպատոս Անհէքէ ճառ մը խօսեցաւ «Քանիցս գեղեցիկ երկիրներուն գերմանական հանուց տեսակետով կարևորութեան վրայ»։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամեն. Ս. Գատրիարք Հայրը 20 լիրա նուիրեց, ի նպաստ չինութեան թարգմանչաց վարժարանի Մէջադիւղի։

Կրօնական ժողովն երեկ չարաթական նիստ ըրաւ, բայց ընդհանրապէս մասնաւոր ուսանողական խնդրոյն զբաղեցաւ, և Կրօնական դիւանին կոչմանէ իրրև հրատարակերի տնօրինութիւն սա՝ միայն հաղորդուեցաւ, թէ Ամենայն Եկեղեցեաց ընկերութիւնն՝ ըստ վաւերացեալ կանոնագրոյն, իւր վարժարանը բացած և ծաղրելն Կրօնական Ժողովոյ մասուցած լինելով՝ որոշուեցաւ առ Ուսումնական խորհուրդն յղել ծրագիրն ի քննութիւն։

Ցիշեալ ընկերութեան անունը Ս. Ուխտի Մխիթարեան էր, բայց Կրօնական ժողովն «Եկեղեցասիրաց» յորջորջեց անցեալներն, նորա կանոնագրոյն քննութեան ու վաւերացման առթիւ։

Հրատարակած էինք անցեալ չաբթու, թէ Ռատոսթոյի գաւառական ընդհանուր ժողովը վիճակն Առաջնորդ Գեր. Տ. Ներսէս Ս. Աբգարեանոսի պաշտօնավարութեան համար գոհունակութեան դիր գրած է առ կեդրոնական Վարչութիւնն, և իմացուած է չընդունիլ Նորին Գերապատուութեան հրաժարականը, զոր մատուցած է՝ թերևս վշտանալով իւր վրայ տեսնուած անախորժ հրատարակութիւններէն։

Ապա իմացանք, որ այս դիրը գրողը չէ թէ Գաւառական, այլ Բազմական ժողովն է, հետևանքով Թաղական խորհուրդը։ Ոմանց համար թերևս կարևորութիւն ունենայ այս ուղղութիւնը։

Պատրիարքարանն առն ու կնոջ մէջ տեղի ունեցած գժտութիւնը ըննելով անցեալներն, հարկ համարած էր որ այր ու կին ժամանակ մը հեռի մնան իրարմէ, և այրն ամսաթոշակ մը վճարէ կնոջն։ Դատական նախարարութիւնն, որուն հաղորդուած էր Պատրիարքարանի այս վճիռն, երբ կը ձեռնարկէ գործադրել, իմանալով որ այրը մայրաքաղաքէն Պոլսում գացած է, կը հարկադրի գրել առ Օսմանեան հիւպատոս տեղւոյն, և հիւպատոսն գտնել տալով զնա՝ կը հաղորդէ վճիռն, սակայն պատասխան կընդունի, թէ թոշակի հարկ չկայ, և թէ ինքն պատրաստ է ամենայն սիրով ընդունիլ իւր կինն, երբ գայ Պոլսում և ուզէ կենակցիլ իրեն հետ։ Արդ՝ հիւպատոսին տրուած այս պատասխանը Պատրիարքարանի գրասենեակ դատական նախարարութեան կողմանէ, ուղղած է իմանալ Պատրիարքարանի կարծիքը։ և կը լսենք որ պատասխան պիտի տրուի թէ բացակայ անգամ հաշուած է կինն ամուսնոյն հետ, բայց վերջապէս հարկ եղած է զանոնք առ ժամանակ մի հեռացնել իրարմէ, և այդն գտնապարտել ամսաթոշակի վճարման։

Ամեն. Մ. Պատրիարք Հայրը Վեզիրի օրհնութեան կոնդակ ղրկեց՝ առ հոդևոր Հովիւն պատուարժան ազգայնոց Մանչեսթրի, Գեր. Տ. Սուրիուս վարդապետ Պարոնեան։

Լայրցիկէն առ Մեղու Հայասդանի ուղղեալ նամակի մը հետևեւալ մասն ուշադրութեան արժանի է։

«Չին Հայաստանի աշխարհագրութիւնը արդէն շատ ուսումնասիրուած ասնդամ է, բայց մինչև այժմ ոչ մի օրինաւոր այդ երկրի քարտէզ չկայ։ Վենետիկեանների տպած քարտէզը այժմ իւր անթիւ սխալներով և թերութեամբ մեծապէս ուշ ունչ օգուտ չէ կարող տալ։ Բերլինի համալսարանի աշխարհագրութեան հռչակաւոր պրոֆիսոր դոքտոր Ռիչտրոֆեն ևս խորին յարգանքը նուիրած էի իմ աշխարհագրութեան ձեռնարկիս մի օրինակ և խնդրած արդեօք որքան կ'արժենայ հայոց միջնակարգ ուսումնարաններին և մասնաւորապէս այդ ձեռնարկի համար մի Չին Հայաստանի աշխարհագրութեան քարտէզը։ Ցարդ երբ պրոֆիսսորը նախ կարդացել է իմ «Չ. Հայաստանի աշխարհագրութեան» ձեռնարկը ամեն երես ամեն մի տող սուր նկատողութեան և հայեցողութեան տակ ձգելով և բոլոր սխալները առանձին նշանակելով և ուղղելով, բացի դրանից աւելացրել է այն անունները, որ կարևոր է համարել հայ միջնակարգ ուսումնարանների համար։ Նկարել է մի փոքրիկ բայց շատ ընտիր Հ. Հայաստանի քարտէզ գեղեցիկ գոյներով հայերէն տառերով գրած։ Այս քարտէզը իւր նկատողութիւնների և մի առանձին նամակի հետ ուղարկել է ինձ։ Սարսռելց ներուամ է, որ մի քարտէզ հայերէն տառերով հին անունները կարմիր, նարերը սև, լեռները շագանակագոյն, ջրերը կապոյտ, նահանգները դանդան։ մասնաւորապէս Վենետիկեանների փոքր քարտէզից մէկ ու կէս անգամ մեծ՝ կարժենայ 60 կ. կամ մի մարկ 20 ֆէնիգ։ Մայն եթէ ասուելուց յետոյ իսկոյն 2,000 օրինակ ուղարկի առնոյ լինի։ Ճշմարիտ ասած մի այնպիսի գեղեցիկ քարտէզ, պատրաստուած մի այնպիսի գեղանակի ձեռքով շատ արժանի է։ եթէ մեզանից ով և իցէ փորձ մասուցած լինելով՝ որոշուեցաւ առ Ուսումնական խորհուրդն յղել ծրագիրն ի քննութիւն։

Ցիշեալ ընկերութեան անունը Ս. Ուխտի Մխիթարեան էր, բայց Կրօնական ժողովն «Եկեղեցասիրաց» յորջորջեց անցեալներն, նորա կանոնագրոյն քննութեան ու վաւերացման առթիւ։

Հրատարակած էինք անցեալ չաբթու, թէ Ռատոսթոյի գաւառական ընդհանուր ժողովը վիճակն Առաջնորդ Գեր. Տ. Ներսէս Ս. Աբգարեանոսի պաշտօնավարութեան համար գոհունակութեան դիր գրած է առ կեդրոնական Վարչութիւնն, և իմացուած է չընդունիլ Նորին Գերապատուութեան հրաժարականը, զոր մատուցած է՝ թերևս վշտանալով իւր վրայ տեսնուած անախորժ հրատարակութիւններէն։

Ապա իմացանք, որ այս դիրը գրողը չէ թէ Գաւառական, այլ Բազմական ժողովն է, հետևանքով Թաղական խորհուրդը։ Ոմանց համար թերևս կարևորութիւն ունենայ այս ուղղութիւնը։

Պատրիարքարանն առն ու կնոջ մէջ տեղի ունեցած գժտութիւնը ըննելով անցեալներն, հարկ համարած էր որ այր ու կին ժամանակ մը հեռի մնան իրարմէ, և այրն ամսաթոշակ մը վճարէ կնոջն։ Դատական նախարարութիւնն, որուն հաղորդուած էր Պատրիարքարանի այս վճիռն, երբ կը ձեռնարկէ գործադրել, իմանալով որ այրը մայրաքաղաքէն Պոլսում գացած է, կը հարկադրի գրել առ Օսմանեան հիւպատոս տեղւոյն, և հիւպատոսն գտնել տալով զնա՝ կը հաղորդէ վճիռն, սակայն պատասխան կընդունի, թէ թոշակի հարկ չկայ, և թէ ինքն պատրաստ է ամենայն սիրով ընդունիլ իւր կինն, երբ գայ Պոլսում և ուզէ կենակցիլ իրեն հետ։ Արդ՝ հիւպատոսին տրուած այս պատասխանը Պատրիարքարանի գրասենեակ դատական նախարարութեան կողմանէ, ուղղուած է իմանալ Պատրիարքարանի կարծիքը։ և կը լսենք որ պատասխան պիտի տրուի թէ բացակայ անգամ հաշուած է կինն ամուսնոյն հետ, բայց վերջապէս հարկ եղած է զանոնք առ ժամանակ մի հեռացնել իրարմէ, և այդն գտնապարտել ամսաթոշակի վճարման։

Ամեն. Մ. Պատրիարք Հայրը Վեզիրի օրհնութեան կոնդակ ղրկեց՝ առ հոդևոր Հովիւն պատուարժան ազգայնոց Մանչեսթրի, Գեր. Տ. Սուրիուս վարդապետ Պարոնեան։

Լայրցիկէն առ Մեղու Հայասդանի ուղղեալ նամակի մը հետևեւալ մասն ուշադրութեան արժանի է։

«Չին Հայաստանի աշխարհագրութիւնը արդէն շատ ուսումնասիրուած ասնդամ է, բայց մինչև այժմ ոչ մի օրինաւոր այդ երկրի քարտէզ չկայ։ Վենետիկեանների տպած քարտէզը այժմ իւր անթիւ սխալներով և թերութեամբ մեծապէս ուշ ունչ օգուտ չէ կարող տալ։ Բերլինի համալսարանի աշխարհագրութեան հռչակաւոր պրոֆիսոր դոքտոր Ռիչտրոֆեն ևս խորին յարգանքը նուիրած էի իմ աշխարհագրութեան ձեռնարկիս մի օրինակ և խնդրած արդեօք որքան կ'արժենայ հայոց միջնակարգ ուսումնարաններին և մասնաւորապէս այդ ձեռնարկի համար մի Չին Հայաստանի աշխարհագրութեան քարտէզը։ Ցարդ երբ պրոֆիսսորը նախ կարդացել է իմ «Չ. Հայաստանի աշխարհագրութեան» ձեռնարկը ամեն երես ամեն մի տող սուր նկատողութեան և հայեցողութեան տակ ձգելով և բոլոր սխալները առանձին նշանակելով և ուղղելով, բացի դրանից աւելացրել է այն անունները, որ կարևոր է համարել հայ միջնակարգ ուսումնարանների համար։ Նկարել է մի փոքրիկ բայց շատ ընտիր Հ. Հայաստանի քարտէզ գեղեցիկ գոյներով հայերէն տառերով գրած։ Այս քարտէզը իւր նկատողութիւնների և մի առանձին նամակի հետ ուղարկել է ինձ։ Սարսռելց ներուամ է, որ մի քարտէզ հայերէն տառերով հին անունները կարմիր, նարերը սև, լեռները շագանակագոյն, ջրերը կապոյտ, նահանգները դանդան։ մասնաւորապէս Վենետիկեանների փոքր քարտէզից մէկ ու կէս անգամ մեծ՝ կարժենայ 60 կ. կամ մի մարկ 20 ֆէնիգ։ Մայն եթէ ասուելուց յետոյ իսկոյն 2,000 օրինակ ուղարկի առնոյ լինի։ Ճշմարիտ ասած մի այնպիսի գեղեցիկ քարտէզ, պատրաստուած մի այնպիսի գեղանակի ձեռքով շատ արժանի է։ եթէ մեզանից ով և իցէ փորձ մի այդպիսի քարտէզ տալ տալու, առ նուազը կնոտի մի ռ., այն ևս գուցէ տասը անգամ գրանից վատ։ Եթէ այս բոպէիս ես մէջտեղ ունենայի՝ առանց ուշացնելու կ'ղրկէի յարդելի պրոֆիսորին գործը չուտով վերջու։ Ամենից յարմար «Թիֆլիսի Դշդերի հրատարակութեան ընկերութիւնը» կարող էր այս հանգամանքից օգուտ քաղը Զգ պէտք է խնայել 1,200 ռ., պէտք է դնել առաջի 2,000 օրինակը և այնուհետև մատաքը բանալ ու փոքր քանակութեամբ էլ կարելի էր առնել։

«Այդ 2,000 օրինակը իւր անդամների միջոցով մի տարում կարող է ընկերութիւնը գոյացներում վաճառել։ Բայց որ հայը չի կամենայ 60 կ. այդպիսի մի փառաւոր քարտէզ ունենալ։ Հանդամանքը ձեռից չը պէտք է թողնել — ամեն ժամանակ դիմանալ հայ աշխարհագէտ Ֆիլիպեաներ չեն լինի։ Նորը կարող էին առնել հայ գրավաճառները իւրեանց շահը աչքի առաջ ունենալով։ քարտէզի մէկը իւրեանց կը նստի 60 կ. (դես աւելի պակաս) կը վաճառեն շատ հեշտութեամբ 1 ռ. 20 կ. և գոյա հետ միասին մեծ ծառայութիւն արած կը լինին հայոց ուսումնարանական գործին։

Ա-եռ+ Տէր-Թադէոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական Հրամանաւ՝

Դրէզդէնի կառավարիչ կարգեցաւ Էնկիւրիի նախագրի կեդրոնական կառավարիչ Մահմուտ պէյ։

Պուսական խորհրդոյ դիւանին սրբագրիչ (միւմէյիզ) Պէհճէթ պէյ՝ Էնկիւրիի կեդրոնական կառավարիչ անուանեցաւ։

Տիրիպոլի Օսմ. հիւպատոս կարգեցաւ Էդուարդ պէյ, որ առաջ ալ այն պաշտօնը կը վարէր։

Նոյն Օսմանեան հիւպատոսութեան պաշտօնը՝ թարգմանչաց դիւանի անդամներէն Մուսթաֆա Նազիմ պէյի յանձնուեցաւ։

Թէրջիմանը–Հաղիգաթ կը հերքի ձեբեռեթ–Հաղարեի այն լուրը, թէ Իմրիսնէի Էվգաֆի հաշուոյ գնումներու համար Էվգաֆի պաշտօնատունէն յատկապէս պաշտօնական մը կը զրկուի։ Ցիշեալ լրագրին կը յաւելու, թէ Իմրիսնէի Էվգաֆի համարակոմ՝ որ իւր պաշտօնն ամենայն հաստատութեամբ կը վարէ, և ամեն ամսագլուխ Պոլիս կը զրկէ հաշիները, դատ պիտի բանայ ձեբեռեթ դեմ՝ նոյն հրատարակութեան համար։

Մայրաքաղաքիս Իտալական դեսպանատան թարգմաններէն Պ. Շնաղէ՝ որ առևտրական դատարանի գործերով զբաղէր՝ վարը Իտալիա կուգայ, փոխանորդ Թողով թարգման Պ. Դոկէրն։

Կրնայի, թէ Կիւլհանէ անատանութեան դիւերօթիկ վարժարան մը պիտի հաստատուի։

Այսրնի գաւառական լրագրին կ'իմացուի, թէ Տէնիզլիի մէջ և շրջակայքը մարախի հետքն անդամ մնացած չէ։

Զինուորական նախարարն ապարքնելով՝ սկսած է վարել իւր պաշտօնը։

Երեկ իտալական դեսպանատան մէջ ընդունելութիւն եղաւ իտալական ազգային ոտնի պատճառաւ, դեսպանական շքեղաւոր զարդարեցան, և պատական պահանջաւոր ընդանօթներ արձակեց։

Սուլթանիյէ վարժարանի ուսումնարան աշակերտաց հարցանքնութիւնք սկսան երեկ՝ վարժարանին վերատեսուչ Իսմայիլ պէյի ներկայութեամբ կարգեալ յանձնաժողովոյ միջոցաւ, որոյ անդամ են վարժարանին առաջին կարգի ուսուցիչք, և Բ. Դրան կողմանէ ալ ներկայ պիտի դտնուին պետական խորհրդոյ անդամներէն Իզզէտտին պէյ և գինուորական պաշտօնականներէն Հիւսնի փաշա։

Լայլիի օրիորդական վարժարանի հարցանքնութիւնք կատարուեցան նախընթաց օրն, աշակերտուհիներէն Լաթիֆէյէ և Նաֆիյէ հանդիսաւորեցան, և գոհունակութեան արժանի դտնուեցաւ Հաֆրդէ և Այշէ հանրամ ուսուցչուհեաց փութաջանութիւնն։

Թուրքիոյ երկրագործական վիճակը քննելու պաշտօնով մայրաքաղաքս եկող դաշնակցի մարքիզն՝ այսօր մայրաքաղաքէս կուգուորի Իզմիր, և անտի Պէրութի կոչմերը։

Պուսական Մուդատեմիէ–Շերիֆ նաև՝ Սէլանիկէն ատաղձ բարձեալ՝ երեկ առաւօտ մայրաքաղաքս հասնելով, նաւաքանը մնաց։

Իզմիրի երկրագործական Գոսիեր Բիւլթիմ պէյ՝ որ մայրաքաղաքս եկած էր, այսօր կուգուորի պաշտօնատեղին։

Հանրային կրթութեան պաշտօնատան ընդհանրամ, Դարիպը–Ֆրունի կոմսն ձեռնարկեալ շինութեան գործին առաջնորդ լինելով մնաց պաշտօնատան դիւանները անդ պիտի հաստատուին։

Քերէսթէ–Կէօմիւկի կոչուած մաքսատան շէնքը կառավարութեան ստացուած քը չինելով, Քերէսթէճիլերի նաւատաստանին մօտ, քարուկիր նոր շէնք մը սկսաւ կառուցուիլ։ Հիմնարկութեան առաջին քարը դրուեցաւ շաբաթ օրն, ի ներկայութեան մաքսատան տեսչաց և պաշտօնատարաց։

Լրագրական տեսչութիւնն արգիլեց յունարէն Ռամդաղաս անուն դաւեշտական լրագրին Թուրքիա մտանելը։

Աֆյոնի գաւառական լրագիրը կը գրէ թէ Իզմիրէն ի Քասապա երկաթուղոյ ընկերութիւնը մտադիր է դիմ մը հաստատել դէպ ի Ուշադ և Աֆիոն Դարտիհար Երկրագործ մը զրկուած է այն կողմերն հարկ եղած նեսական քննութիւնները կատարելու համար։

Մայրաքաղաքիս Թուրքերէն լրագրոց մէջ հրատարակեալ պաշտօնական ազդ մը կը ծանուցանէ թէ Աֆէնդի Օմ. գեսպանատունէն առնուած տեղեկագրին համեմատ, հելլենական կառավարութիւնն հաստատեր է որ Ցանտանի թաղեալ գաւառաց մահմետական բնակիչք Օսմ. հիւպատոսութիւնը պահեն, նոյն իսկ Թուրքօ–հելլենական գաղտնի ուրբատարած եռամեայ պայմանագրի լրմանէն յետոյ, և առանց երկոց բնակավայրք թողլոյ։

Գոնիայի Գարաբի գաւառակին և շրջակայից բնակիչք, փոխկատարիչն օգնութեամբ կ'աշխատին, մարախներու ջնջման օրք արտերուն մէջ սկսած են երևիլ։

Բասթամանիի լրագիրը կը գրէ թէ գաւառին կառավարչ Ապա–իբ–Բահման փաշա Ինեգոլու գնացած է, նաւահանգստի շինութիւն առաջ մղելու և քաղաքային նորահաստատ հիւանդանոցի շինութիւնն տեսչացնելու տալու համար։ Այս առթիւ Ապա–իբ–Բահման փաշա աչքի պիտի անցնի Բասթամանիէն յինկոլի բացուող կառուցվոյն աշխատութիւնները։

ՄէՀիրէճ՝ Եանեայէն առնուած նոր բուգոյն տեղեկութիւններէ կիմանայ, թէ վազքիներու խնդրոյն առթիւ Կնեաէն ընդհանուր ժողովոյ մէջ ծագած յուզումն և ըրիատնեայ երեսփոխանաց շարունակ ընդդիմութիւնն հարկադրեր են զիօթիատէս փաշա՝ հրաժարական տալ Բ. Դրան, և կրնաէի Ընդհ. ժողովն անտարբերութեամբ լսեր է կառավարին հրաժարումն։

Գիլիպէէն կը ծանուցանեն թէ Արևելեան Բումէլիի նորընտիր կուսակալ Կամրիլ փաշա երէկ պիտի մեկնէր Կ. Պոլիս դարձ համար։

Քանի մ'օր առաջ եօթն աւազակներ Սաքարիայի ծովեզերքն իջնելով, նաւավարները կողոպտել ուզեցին, նոքա ընդդիմացան և արիւնահեղ կռիւ մը ծագեցաւ։ Հուսկ ուրեմն աւազակք պարտեալ հեռացան։ անոնցմէ մին ծանրապէս վիրաւորուած էր։ Այս աւազակաց խմբի մէկ մասն ալ Սէլիմպրիի մօտերը քանի մը կամնամաճառներ կողոպտեցին և անոնց 6 ձին յափշտակեցին։

Ամոյս 8ին, Մերսինէն Նեվշէհիր ուղեւորող կարաւանին վրայ 15 աւազակք յարձակելով Կէօլէն–Պօղազի կոչուած կիրճին մէջ, երկու մարդ վիրաւորեր, առաջնորդները դանակոծեր և կարաւանին վաճառքները, դրամն ու ձիերը յափշտակեր են։

Բերայի Ջրհանարաց խմբի հրամանաւ Զեյնէպի կոնը քաղաքապետ Մաղհար փաշայի հետ խորհրդակցութեամբ, նոր դրութեամբ երեք ջրհաններ ապաստած է յերուսալէմ, իւրաքանչիւրն 300ական ոսկւոյ։ Այս ջրհաններն՝ որոց ծախքը պիտի վճարուի Զ. ջրհանակի թաղապետութեան կողմէ, հիներէն շատ աւելի արագ և դիւրաւ օգնութիւն կը հասցընեն։

Երեկուան ՄէՀէրիօր Օրէնդրելի մէջ կը կարդանք։ «Նաբաթի օրը, տարբաղդ Օր. Աստղիկի գագաղը Նոր Թատրոնի առջևէն տարուած ժամանակ, գերասանուհւոյն ընկերք նուագածուց խմբի մ'առաջնորդութեամբ, մեռելական երգով մը ողջունեցին զայն։ Բահանայք զայս տեսնելով, շուրջառնին հանեցին և յուզարկաւորաց թափորը թողլով, մեկնեցան առանց ունկն դնելու իրենց եպիսկոպոսին խնատուն խորհրդոյն, որ կը ջանար ցոյց տալ թէ անպատեհ էր այս տեսակ արարք մը։ Ասոր վերայ, նուագածուքն ընեցին և յուզարկաւորութիւնը շարունակուեցաւ, բաղմութեան տրտունջներով։»

Վիէնայէն կը ծանուցանեն թէ Ֆրանց Եոզէֆ կայսրն հրամայած է որ Գրատրոպի ապարատանէն վեց սպիտակ նժոյգ ընտրուի, Վեհ. Սուլթանին նուէր ղրկուելու համար։

Մայրաքաղաքէս կը գրեն առ Բուլէվարդ Բիւլուբիանին թէ օմ. ընդհանուր պարատուղ վարչութիւնն գրաւուրապէս հարցուցած է Բ. Դրան, թէ կայսերական կառավարութիւնը մտադիր է պատուիրակ կարգել արժեւորելոյ միացման համար, յատուկ կոմիսներու պայմանաժամէն առաջ։ Եթէ պատուիրակ չպիտի կարգէ, պարատուղ վարչութիւնը պիտի հրաժարի միացման խորհրդէն և կայսերական դանձը պատասխանատու պիտի թարս մնայ։ ցարդ դիւաբաղ պարատուղ, ինչպէս նաև ուրիշ անտեղութեանց։

Բ. Դուռը փափաք յայտնած լինելով Դարատաղի զանազան քաղաքաց մէջ հիւպատոսութիւններ հաստատել, Նիքոլա իշխանն համակերպած է այսմ և ի մեծագ հիւպատոսք պիտի անուանուին Տիրլիմոյ, Բատիզիծայի, Նիքշիչի և Պիէլբօլիքի համար։

Եղնատան նախարարութիւնը ջրջարերակատար մը յանձնարարեց Փոքր–Ասիոյ գաւառական իշխանութեանց թէ այն գաղթականք որոց հաստատման թուականը երեք տարին անցած է, տասանորդի տրոց ենթարկուին, ուսկից ազատ թողուած էին վերջին պատերազմին պատճառաւ։

Ցառաջագոյն գրած էինք թէ սանիկանութեան նախարարը մտադիր է իւրաքանչիւր թաղի մէջ աղբիւրներ բանալ հրդեհի ժամանակ ջրկիրներու կարօտ չմնալու և անմիջական օգնութիւն հասցնելու համար։ Ցիշեալ նախարարութիւնը այս բանիս հարկաւոր եղող դումարն ի ցարդ ջրկիրներու վճարուած ծախքերը միմեանց հետ բաղդատելով, դատ թէ ազբիւրներու հաստատութիւնն աւելի ազատ պիտի լինի, ուստի և մեծագ գործադրութեան պիտի դնէ իւր այս խորհուրդը։

Տիմօթէքային Տէրվիշներ գիւղի յուներ համար մայիս 21 օրը մեծ ասն մը լինելով, տեղւոյն յոյն մետրոպոլիտն հրաւիրուած էր պատարագել։ Բայց նախորդ երեկոյին Գուլիար քահանայի մը սարգրութեամբ նամակ մ'ընդունած էր, որ կը սպառնար թէ մահու ասպիսնան պիտի գանակոծուի եթէ պատարագէ։ Ցայն հատարակութիւնն յուզուեցաւ և հարիւրապետ մը ու քանի մը ոստիկանք ղրկուեցան ի Տերվիշներ։ Բայց յաջորդ օրը մեծ եղաւ մեծարգոյնին զարմանքն, երբ եկեղեցին երթալով տեսաւ պուլկար քահանայ մը, որ կը սկսէր պատարագել։ բարկացած վրան յարձակեցաւ, և կռիւ մը ծագեցաւ երկու եկեղեցականաց միջև։ Սպասաւորք հասան, կռիւը մեծնալով դանակոծութեան փոխուեցաւ, հուսկ ուրեմն ոստիկանք միջամտելով, բաժնեցին իրարմէ և դործը քննելով, յոյն քահանային իրաւունք տուին և պուլկար քահանայն վանեցին եկեղեցիէն։

Ցեղական լրագիր մը կը պատմէ թէ Վիէննայի մաքսատան պաշտօնեայք անցեալ չորեքշաբթի կարաքամակ մը ծերունի մը նշմարեցին, տարօրինակ կերպով հագուած, որ հետիոտս կուգար։ Լեզուն անծանօթ էր իրենց։ ոստիկան մը մոտերեց Օսմանեան հիւպատոսարանը տանիլ զայն և հասկցուեցաւ թէ այս ծերունին Տէրվիշ մ'էր որ երիտասարդ Աբարիոյ խորերէն մինչև Բէշդա գընացած էր հետիոտն, Կիւլ Պապայի գերեզմանին վրայ աղօթելու։ Կիւլ Պապա մահմետական սուրբ ծերունի մ'է, որոյ գերեզմանն այդ քաղաքին մէջ կը գտնուի։ Բարի ծերունին իւր ուխտագնացութիւնը կատարելէ յետոյ, Վիէննա գնացած էր, դարձեալ հետիոտն, ուսկից կը մտադրէր Լոնտոն անցնիլ, և շրջենալով՝ հայրենիքը վերադառնալ։ Բարեբաղդաբար, հիւպատոսարանն այս նեղութիւնը խնայեց ծերունւոյն՝ վառնայի ճամբով Պոլիս ղրկելով զնա ուզղակի։

Տիկին Տէտէեանի մահուան դէպքին վրայ երէկի Լիւբէքի մէջ հեռաւեւալ տեղեկութիւնները կը կարդամք։

«Մայիս 14 դիշերը, Բերլա, իւր տան մէջ կը մեռնի Տիկին Անժէլիք Տէտէեան, 38 տարեկան, ամուսին Յակոբ էֆէնտի Տէտէեանի, ծնեալ կոմսուհի Ռիէդմարք։ Յաջորդ օրը Բերայի Հայոց եկեղեցւոյ քահանայք մարմինը թաղեցին Ֆէրի գիւղի գերեզմանատունը։ Տիկին Տէտէեան մեռած է 3–4 ժամու մէջ։ Առջի դիշերը նոր Թատրոն գնացած էր և դինք տեսնողները կը վկայեն թէ քաջառողջ դէմք մ'ունէր և այսպիսի յանկարծական մահուան մը նշան չէր կրեր։ Թատրոնէն վերադարձին խաղը փակուեցաւ։ Կէս գիշերին, ստամոքի ցաւեր զգաց ստամոքը և փորը։ Ամուսինն անմիջապէս բժշկին մարդ ղրկեց։ Կ'ըսուի թէ երիտասարդ բժշկի չեն ուզած հիւանդին քով երթալ, առարկելով թէ իրենց յանձնարարդը չէ։ Երրորդ բժիշկ մը յօժարեցաւ, բայց մինչև որ հիւանդին քով գնաց, մեռած էր նա։ Այսպիսի տարօրինակ մահ մը հատարակաց հետաքրքրութիւնը գրգռեց, Բերայի ոստիկանութիւնը գաղտնի քննութիւն մը բացաւ ու 4–5 օր յետոյ Կալաթա–Սէրայի դատախազն հանդուցեալին առնն այցելեց ի ներկայութեան ամուսնոյն։ Խուզարկութեան ժամանակ փորը չկը մը գտան որ «ԷՐԷՖԷՐ» կը պարունակէր։

«Դարակի մը մէջէն անատրագիր եամակ մը գտնուեցաւ ֆրանսերէն գրուած, որ գրեթէ սա խօսքերը կը պարունակէր։ — Կը մեռնիմ, վասն զի չեմ կրնար այլ ևս տակալ այս կեանքին։ Կը ներեմ անոնց որք կեանքն տուին ընդ ինձ։ Մեռած պահուս բան մը միայն կը ցաւիմ, այն է թէ միայնակ պիտի թողում զաւակս և իմ ամէնիս և բարի ամուսինս»։ — Աշխարհի մը մէջ իւր մէկ լուսանկարը գտնուեցաւ, որոյ ետին սա բառերը գրուած էին «Առ ամենասուրբ հօրեղբօրորդիս, իշխան Լուսինեան Աբրահամիոսիս։ Կոմսուհի Ռիէդմարք։»

«Ամուսնոյն հարցուելով, որ ինչո՞ւ երեւան չէր հանած թէ կինն ինքզինքն սպանած է, պատասխանեց թէ վասնցած էր որ քահանայք մարմինը չէին թաղեր։ Այս հարցանութեան վրայ, Բերայի գաւառանը եղելութիւնն ոստիկանութեան նախարարին յայտնեց, և քանի մ'օրէ հետէ ձեռք առնուած է գործ մը՝ որ մեռացման պիտի մատնուէր։ Աւստրիական հիւպատոսարանն ոստիկանութեան հետ կը գործէ, վասն զի հանգուցեալն Աւստրիոյ հպատակ էր։ Տիկին Անժէլիք, Տէտէեան Յակոբ էֆէնտիի հետ ամուսնացած էր ի Բարիզ, արուեստանոցիսին ժամանակ Դեռ չատ չքներ որ Պոլիս եկած էր։ Բոլոր զինքը ճանչցողներն կգովեն առնոր կրթութիւնը, և գեղեցկութիւնը։ կըսուի թէ հայերենը իրր մայրենի լեզու կը խօսէր»։

Իրրեւ պարզ ծանօթութիւն կը հրատարակեմք զայս, միշտ սպասելով ստոյգ տեղեկութեանց։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ
(Այսրուան)

ԱԺԱՆՍ ՌԻԻԴԵՐ

Սթէյնք, 2 յունիս

Գահաժառանգ Կոստանդին դուքսին անուան տարեդարձին առ

կանութիւնը դեռ չկրցաւ ձերբակալել Սէնդ Ճէյմս Սքուէրի և Աքօթլանտ Եարտի մէջ անցեալ օր պատահած պայթմանց հեղինակները։ Նորագոյն տեղեկութիւնը կը հաստատեն թէ այդ պայթմանց պատճառած վնասները կարծուածէն աւելի են։ Բացի 15 վիրաւորեալներէ, մարդու կորուստ չկայ։

Կալկաթա, 2 յունիս

Թեսպուլէն առնուած լուրեր կը ծանուցանեն թէ Նէմիր Ասպիրրահման խան, Ագիզ Մօլա խանը Բէնճէպի կառավարիչ կարգեց, որպէս զի Ա.Թիքանխանի և այդ գաւառի թափառաշրջիկ ցեղերու միջեւ յարաբերութիւններն ամրապնդէ։

ԱԺԱՆՆ ՀՈՎԱՍ

Ա.թէնք, 2 յունիս

Թագաւորն 5000 զօրաց հանդէս մը կատարել տուաւ։ Խուռն բազմութիւն կար։ Թագաւորն, իշխանք, բանակն եւ նախարարք ցնծագին ազատականներով ընդունուեցան։ Թագաւորն և իշխանք այսօր Վիզզատէն կ'ուղեւորին։

Լոնտոն, 2 յունիս

Ուրբաթ երեկոյեան պայթման վրայ Ոստիկանութեան ձեռնարկած բոլոր խուզարկութիւնք ապարդիւն մնացին մինչեւ ցարդ։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ԳՈՐՍԱ

Ղալաթիա, 22 Մայիս

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Օսմանեան Քօնսոլիտ

Երէկ երեկոյ գոցուեցաւ....դէկ.	9	16
Գօրսային գոցուելէն վերջը «	—	
Երէկ Բերայի մէջ.....	—	
Առաւօտուն բացուեցաւ..... «	9	15
Բարձրագոյն գին ..... «	9	15 1/2
Նուազագոյն ..... «	9	15
Կէս օրին ..... «	9	15 1/2
Փոխառութիւն 1865.....Ֆր.	57	
» 1865..... «	55	
» 1869..... «	46	50
» 1873..... «	42	
Պոն տիւթիւլզը.....Անգլ. լիրա	17	
Բուէնոս Էրէսի թուղթ.....Ֆր.	45	50
Օպլիկասիոն տը Բրիօրիթէ »	378	

ԲԱԺՆԵՏՈՒՄՔ

Սօսիէթէ Ժէնէրալ....Անգ. ոսկի	3	30
Ֆրէտի Ժէնէրալ..... Օսմ. լիրա	7	18
Պանք տը Բօնս (գուբ. կար.)	6	35
Սօս. Շանժ է վալ... Օսմ. լիրա	3	30
Թրամուէյ ..... « «	295	
Ինթիֆիզ. Եգիպտական	—	
Երէկ իրիկուն գոցուեցաւ	67	25
Գիշերը գործ չեղաւ	—	
Այս առաւօտ բացուեցաւ..	67	25
Կէս օրին նոյն գին	—	

Ընթացք դրամոց

Օսմ. ոսկի..... Ղրշ.	100—	
20 ֆրանքնոց ..... «	87	27
Անգլ. ոսկի ..... «	110	6
Ֆրիմից ..... «	51	10
Բօլ Խրերիալ	90	2
Ռուսական Թղթադրամ..... «	9	2
Թալէր ..... «	—	
Ֆիօրին ..... «	9	5
Մէճ. արծ. (տարբ.) ..... «	108	10
Հինդնոց ..... «	102	30
Մէթալիք ..... «	100	30
Պղնձ ..... «	730	—
Թղթադրամ..... «	—	—
Վեցնոց..... «	102	38

(ԱԺԱՆՆ ՀԱՎԱՍ)

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԳՈՐՍԱ

(Լոնտոնի և Վիէննայի գրասենեակը ֆոց են գծել պարտեսաս։)

Բարիզ 2 Յունիս ժ. 3 վ. 45 երեկոյ

Ֆր. Ռանտի 4 1/2 0/0 ..... բաց	107	77 1/2
« « 3 0/0 բաց	78	65
Օսմ. Բօնս. բացուեցաւ	8	55
« « գոցուեցաւ.քրն. կտ.	8	52 1/2
Օսմ. փոխառութիւն 1865.	—	
« « 1865.....	—	
« « 1869.....	47	
« « 1873.....	43	
Օսմ. Երկաթուղի	—	
Օսմ. Ռէգիի բաժնեթուղթք	561	25
Պանք Օթօման	657	50
Դրէտի Լիոնէ	566	25
» Ֆոնսիէ.....	1517	50
Բաժնետուն Լիոնի (կուբ. կար.)	1230	
Սուէզի ջրանց.....	2075	
Ռուսական 5% 1877ի	97	1/4
Իտալական Ռանթի.....	96	35
Արեւ. Ռուս. (Ռիւս Օրիան.).....	—	
Եգիպտական միաց. գոց	303	75
Սպանիական (արտաքին).....	60	3/4
Բրիօրիթէ թիւրք	378	75
5% Հելլենական	365	
Զէք Լոնտրայի վրայ.....	25	20

Պ. Մերենցի «Կայծակնակոսութիւն և Խրիմեան Հայրիկ» անուն տետրակին հրատարակութեան առթիւ, Վասպուրականցի Հայոց հնոր հայրութեան դիր մը տուած լինելով հեղինակին, այդ գրոյն պատասխանը հաղորդուած է մեզի հրատարակութիւն որ է։

ԾԵՐԵՆՑ ԱՌ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻՍ

Մեծապատիւ Տեառք պրոնոսմատորք Վասպուրականի Հայոց։

Ձեր ազնիւ սրտից և զգացմանց բղխեալ նամակն ընդունեցայ անհնարն յարգանքք ինչպէս ձեզ կը վայելէր, որ պրոնոսխա՝ և հայրենի երկրին հաւատարիմ զաւակներ՝ մի բարի գործ կատարեր էք Խրիմեան Հայրիկի անունը յիշեցնելով եւ ներկայացնելով Երեսփոխանական ժողովոյն։

Յիշողութիւնը և արդար գատողութիւնը չատ քիչ անգամ ժողովրդոց կատարելութիւնը եղած են, դուք երեք օրուան մէջ եօթն հարիւր տարի սոսրագրութիւն ժողվելով առաջինի և անմնուէր անձի մը համար՝ ցոյց տուիք թէ գիտէք յիշել և յիշեցնել։

Իսկ երբ խնդիրը կը հասնի Երեսփոխանական ընտրութեան արդարութեան վրայ, ես իմ մասս զոհ եմ, և եթէ իմ ակար ձայնս ապրեցութիւն ունենար նոցա վրայ որ Աստուծոյ տաճարին մէջ պիտի կանգնին կամ Աստուածատուր գահոյից վրայ են բարձրացեալ, կ'ըսէի «Մի խմատէք այդ կարգը, վասն զի ձայն բաղնայ ձայն Աստուծոյ է, մի՛ կասկածիք մարդոյ վրայ որ հոր եւ եղբօր պարտը կատարեցին՝ կեանքերնին տատապանաց և վտանգաց մատնեցին վարուց տաքինութիւնը և մարդութիւնը այս աղտեղի աշխարհքիս մէջ անարատ պահեցին, միշտ հաւատքով թէ Աստուծոյ աչքն իրենց վրայ էր։ այդ պիսի մարդիկ ոչ դաւ գիտեն, ոչ այն քաղաքագիտութիւն որ սատանաներու մէջ կը ծածկուի։

Դժբաղդութիւնը հոն է միայն որ հիմա ընտրութեանց այն չափազանց իրաւունք զոր վայելեցին երբեմն Թուրքոյ Հայք և չատ վատ գործածեցին 1866ին, հիմա նորա փոխարէնն պիտի ընդունին։ ինձ փափաքելի է որ հիմա խելքութեամբ իրաւանց խնդիր չի հանեն։

Սահմանադրութիւնը 1866ին յաղթանակ կանգնեց Պալատենիայի վրայ, եթէ այս օր 1884ին Պալատենիան յաղթանակ կանգնէ Սահմանադրութեան վրայ, ազգը ոչինչ կորուստ չէրեր։ եթէ ընտրեալ անձը արժանաւոր հովիւ է իւր հօտին, Քրիստոսի մատանիէ ըրած այն հովիւ «որ դնէ զանձն իւր ի վերայ ոչխարաց»։

Ես այնպէս կը հաւատամ որ Էջմիածնայ նուիրական տեղոյն առաջ կանգնեալ հարք պիտի յարգեն իւրեանց Ցաճկասանի եղբարց և որդւոց քուէն, և Պալատենեան զՍահմանադրութիւնը պիտի հաստատէ նորա հետեւանքը իւրացնելով՝ և իրացնելով։

Իսկ յանձամ՝ եթէ գտնուին անխոհեմ և ակաւակիտ մարդիկ, որ սիգուռնքի բաղբաղաքք հնարեն, և հայրենի եկեղեցւոյն միութիւնն ուզեն ձեղքել, ես չեմ կարծեր թէ Հայ ազգին մեծամասնութիւնը խմատական պատճառաբանութեանց ուշադիր լինի։ Նոյնպէս չեմ կրնար երեւակայել թէ ոչ Ներսէս և ոչ Թրխեան խրճարանութեամբ ազգին ծառայութենէն հրաժարին։

Բաւական եղած են միշտ բաղբաղաքք և յոխորտանք այս կամ այն կանոնադրութեանց դէմ։ Պէտք է համոզուինք մեծ օրէնդրիսի մը խօսքին, թէ «չկան վատ օրէնք որ լաւ ձեռաց մէջ լաւ հետեւանք չունենան և ոչ լաւ օրէնք որ վատ ձեռաց մէջ վատ հետեւանք չունենան։»

Պալատենիան Ներսէս Աշտարակեցւոյն օրով հայ ազգը և հայ եկեղեցին կրցեր է գոհ ընել։ եթէ իւր յաջորդներուն օրով անկարող եղած է գոհ ընել, ուրմ պէտք է վերադրել յանցանքը։ կը թողում ձեզ և ամէն բանաւոր անձանց խորհրդածել։ իսկ այն մարդկանց հետ որ ոչ իրենց ազգին և ոչ օրէնք տուողին կարողութեան չափը գիտեն ճանաչել՝ բաղդատել և խմանալ, այնպիսի տկարամտաց հետ խօսիլ աւելորդ է, նոքա իրենց սերատածը պիտի կրկնեն անխոհոս մինչև իրենց վերջին շունչը։

Ընդունեցէք, մեծապատիւ Տեառք, եւ. եւ.։ ԾԵՐԵՆՑ

1 Մայիս, 1884 Տփղիս

ԵՕԶՂԱՏ

Ցանուն քաղաքիս ազգայնոց և երկրս ուսանող մանկուտն նուիրական պարտ համարիմ հրապարակաւ խորին շնորհակալիքս յայտնել հետեւեալ ուսումնասէր անձանց, որ հաճեցան ինքնաբերաբար նուիրել ստորև նշանակեալ պարբերական թերթերն և իրերը յօդուտ եւ ի զարգացումն տեղւոյս ազգային երկսեռ վարժարանաց։

Մեծ. Տեառք, Աղամ էֆ. Ադամեան հինգ արծաթ մէճիտ արժէքով մի ժամացոյց, Սարգիս էֆ. Խաչատուրեան մի թօր պատմս, Յարութիւն էֆ. Խանճեան մի օրինակ «Բուրաստան մանկանց»։ Տաքթէօր Յ. Դ. Շերիմեան էֆ. մի օրինակ «Երկրագունդ», Աւետիս էֆ. Ալանեան մի օրինակ «Ընտանիք», Միհրան էֆ. Քիւրքճեան պաշտօնեայ հեռագրութեան մի օրինակ «Խիկար», ինչպէս և յանցլումն տարօրէն նուիրած է սոյն պատուական հատատուութեանց երկերու օրինակ «Բիւրակն», «Բուրաստան մանկանց», «Փունջ», «Մատենաղ տան ժողովրդեան» և «Լոյս»։

Սիրելի է ինձ յուսալ, Տէր Խմբագրապետ, որ տեղւոյս մեծարգոյ ազգայինք վերոյիշեալ բարերարաց զովելի և փայլուն գանան նախանձելի օրինակին հետեւելով՝ պատասխանեւութեամբ և օգտակար նը-

ւիրատուութեամբ կը բաշխերեն գերիսեռ ուսանողաց ի շինութիւն երկրին եւ ազգին։ Տէր Խմբագրապետ, շնորհ ընէք ներկայս ձեր պատուական օրաթերթին մի մերձակայ թուոյն հրատարակելու, այր վասն կանխաւ ջերմագին շնորհակալքս կը մատուցանեմ։

Տեսուչ Ազգ. երկսեռ վարժրանաց։
Ս. Հէրէնեան

8/20 մայիսի 1884
Յ'Եօզղատ

ԳԻՏԱԿԱՆ

—o—

Պ. Վիրց եւ Տարբագիտութիւն

Տարբագիտաց Լարդը կը շարունակէ։ Ապրիլ 19ին Տիւտա մեռաւ և Մայիս 12ին Վիրց անոր հետեւեցաւ։ Երկուքն ալ իրենց գիւտերովը ու անխոնջ աշխատութեամբը անմոռանալի յիշատակներ թողուցին։

Տիւտայի վրայ բաւական խօսեցայ։ Ասոլֆ Վիրց որ նորա աշակերտն էր, 1847 Նոյեմբեր 26ին ծնած էր ի Ուզֆիշէյմ Սիթրազբուրգի մօտ։ Եթէ մանրամասնօրէն պատմեմ թէ ինչպէս, Ասոլֆ Վիրց, բազմաբական ազդակի մը որդի, Սիթրազբուրգի մէջ բժշկութիւն ուսաւ, թէ ինչպէս 1843ին իւր վիայադիրն ստանալէ վերջ Բարիզ գնաց հատատուելու, թէ ինչպէս անդ Տիւտայի թոռան և երեւելին Օրֆիլայի մահուամբ թափուր մնացած տարբագիտութեան դասախօսութիւնքն պտաս ընել, այս ամենը մեծ պատմութիւն չկրնար ընել մեր ընթերցողաց վրայ։

Վիրցի զանազան Ակադեմիաներու անդամակցութիւնն, 1865ին երկամեայ 20 հազար ֆրանքի մրցանակն ստանալն, Բարիզի Բժշկական ճեմարանին գլուխն անցնիլը, Լէժիոն ա'Օնէօր և այլ օտար պատուանշանաց արժանանալը, 1881ին Ֆրանսայի Մեբակոյտի անդամ ընտրուիլը ցոյց և ապացոյց կուտան թէ մեծ յարգանաց արժանի հանդիսացած է այս մարդը։ Իսկ իւր անդադար աշխատութեանց արդիւնքն, իւր գրուածներու ցանկն եւս ակներեւ կը հաստատեն թէ նա ժամանակը պարապ չէ անցուցած։ Երկու հատոր Բժշկական Տարբագիտութիւն, Նոր Տարբագիտութիւն Սկզբնական դասախօսութիւնք, Տարբագիտական ֆիլիսոֆայութիւն դասախօսութիւնք, Հիւլէական տեսութիւն, Աբենպոլան ֆոնոսկոպիէնիներ անուանով հեղինակութիւններէն վերջ եկաւ հսկայական գործ մը, Տեսական և Գործնական Տարբագիտութիւն Բառգիրքը որուն համար բազմաթիւ աշխատակիցներ ունենալովն իսկ հազիւ թէ տասը տարիէն կարողացաւ աւարտել։ և ահա նորանոր գիւտեր, որ մեծաւ մասամբ ինքն կընէր՝ կատիպէին սրբագրել իւր առաջին հատորները, որով սահմանեցաւ Յատնոցներ հանել, առանց սպասելու գործին աւարտման։ Այդ սարսափելի հինգ հատորները որոց հինգն միասին Պ. Վիրց անկարող էր չարկելու՝ դեռ չաւարտած՝ անգլիարէնի կը թարգմանուէին։ Մահուանէն մի քանի օր առաջ Կենդանակերպական Տարբագիտութիւն մը վերջին փորձերը սրբագրեց եւ Ընդհանուր Տարբագիտութիւն անուն նոր գրքի մը պատրաստութեան վրայ էր։ Լուռ կ'ուսնցնիմ ցիր ու ցան աշխատութիւնները, յիշատակագիրները, հանդէսներու և գիտական թերթերու մէջ տուած բազմաթիւ յօդուածները, որոց ամէն մէջը նորանոր տեսութիւններ ու նորանոր փորձերու արդիւնք կը նկարագրէին։

Սակայն Վիրցի վրայ խօսելու համար, որչափ ալ երկարեմ իւր կենսագրութիւնն, չպիտի կարենամ այնքան հեռաբրբրաշարժ եւ միանգամայն այնքան օգտակար ըլլալ մեր ընթերցողաց, որքան կարելի է ըլլալ՝ իւր աշխատութիւններէն մին դէթ մասամբ ներկայացնելով։

Ահա կառնեմ, այս նպատակաւ, իւր Հիւլէական Տեսութիւն անուն գիրքը, և ասոր եղրակացութիւնքը ըստ կարելւոյն համառօտելով յօդուածս նիւթ կընտրեմ։

Գիտեն հարկաւ մեր ընթերցողք թէ տարբագիտութիւնը շատ մեծ յառաջադիմութիւն ըրաւ վերջին տարիներս, և գլխաւորաբար շատ մեծ քայլեր առին Գործարանաւոր Տարբագիտութեան մասին, այսինքն այն սիմթերու մասին որոնք գործարանաւոր մարմինները կը կազմեն այսինքն բոյսերն ու կենդանիք։

Տարբագիտութեան մէջ մարմնոյ բաղադրութիւնները բացատրելու համար հիւլէներու և շամանդաղներու վրայ ենթադրութիւնք կըլլան ասոնց ձգողական և այլ զօրութիւններ վերագրելով։ Ոչ, Գ. Վիրց այս մասին նորանոր տեսութիւնները առաւ, ընդարձակեց, իւրացուց և իւր զօրաւոր ձայնիւը պաշտպանելով հանդերձ՝ անոնց գործածութեամբ ցոյց տուաւ թէ ի՞նչ մեծ գիւտեր կրնան ըլլալ։ Իւր ընդունած տեսութիւնն սա հիման վրայ կը կայանայ թէ պարզ մարմինք, ինչպէս թթուածին, ջրածին, երկաթ, ծծումբ ևն, որոշեալ չափով կը միանան իրարու հետ որպէս թէ բազմաթիւ ձեռքեր ունենային նոցա հիւլէները։ Մէկ թթուածնի հիւլէ մը կարող է երկու ջրածնի հիւլէի հետ միանալ և կը բաղադրէ ջուր։ Մէկ բնածուխ չորս ջրածնի հետ կ'ամուսնանայ, երկու բնածխոյ հիւլէներ կարող են զիրար ընդ գրկել ամրոյզովին, իրենց չորսական ձեռքերովը, բայց կրնան նաեւ մէյմէկ ձեռօք զիրար բռնելով մնացեալներովը վեց հիւլէ առնել միաձեռն ջրածնէն։ Բոլոր մարմինները այսպէս կը դասակարգուին և կը գտնուի որ ընդամէնը վեց տեսակ հիւլէ կարելի է ունենալ բոլոր պարզ մարմնոյ համար։ Միաձեռն հիւլէներ, երկձեռն, եռաձեռն, քառաձեռն, հնգաձեռն և վեցձեռն։ Որեւէ պարզ մարմին այս վեց կարգին միոյն կը պատկանի։ Ջրածինը առաջինէն է, թթուածին, երկաթ՝ երկրորդէն, բորակածին, ոսկի, երրորդէն, բնածուխ չորրորդէն, ֆոսֆոր հինգերորդէն ելն ելն։

Այս ենթադրութիւնը գեղեցիկ հետեւութիւններ ունի։ չէ թէ միայն յայտնի կերեւին այն ամէն բաղադրութիւնները որք անկարելի են ինչպէս մէկ ֆոսֆոր չէ կարող միանալ մէկ թթուածնի հետ, ինչու որ մին քառաձեռն է և միւսն եռաձեռն այլ նաեւ ամէն կարելի բաղադրութիւնք թուղթին վրայ կրնանք պատրաստել, ըստ կարելւոյն նոցա յատկութիւնները նախապէս տեսնելով։ Բանի որ մէկ ածուխ կարող է միանալ չորս ջրածնի հետ, ապա ուրեմն այս բաղադրութենէ առաջ եկած մարմինը կրնայ կազմուիլ։ այս մարմինը կամ գազուած է և կամ ոչ։ եթէ ծանօթ է, լաւ իսկ։ եթէ անծանօթ՝ Վիրց կը մտնէ իւր աշխատանոցը և կը շինէ զայն։ Այսպէսով է որ Ալքոհոլներու ընդարձակ շարք մը յայտնեցաւ գտնելու և սոցա մէջ շատերը անծանօթ էին մինչեւ ցարդ։ Դեռ կան շատ մարմիններ որոց կազմուելուն կարելութիւնը յայտնի է, սակայն ցայսօր չեն կարողացած գտնել բնութեան մէջ և կամ չինել արհեստով։ Դիւրին չէ մարմնոյ մը կազմող տարրերը գիտնալ, այլ ատոնք միացնելով զիրար ընդդրիւել տալ և մարմինը կազմելը բիւրաւոր հնարքներու կը կարօտի, որոց համար տարբագիտութեան խորը թափանցել անհրաժեշտ է։ Այս տեսակէտով տարբագէտը մեզ կը նմանին որ գիտնալով թէ պատուական հեղէն կը պարունակէ ալիւր, իւղ և շաքար, չենք կարող զայն պատրաստել։

Վերոյիշեալ տեսութիւնք գիւտաւոր Նիւթն կը կազմեն Վիրցի յօրինած գրքին, որոյ անունը ի վերև յիշեցի։ Կը թողում այս մասը և կանցնիմ Նէրպոլոգիա անուանած վերջին գրքոյն, որոյ առարկան է Նիւթին Կազմութեան վրայ իւր կարծիքը։

* * *

Արդարև մարմնոյ հիւլէները իրարու հետ միանալով բաղադրութիւններ կազմելու համար իրօք ձեռքեր չունին, այլ ձգողական զօրութիւն մը որ Ջերմութեամբ կամ այլ միջոցներով կրնանք արթնցնել՝ իրարու վրայ ազդելու համար։

Հոս ինքնին եղրակացութիւն մը կը ներկայանայ։ Ամենք փոզոյէն քարի կտոր մը։ ասոր բաղադրող տարրերքն են կիր, բնածուխ և ջրածին։ Կրնանք քարը, երկու մասերն ալ նոյն բաղադրութիւնն ունին։ աւելի մանրենք, դարձեալ այլ և այլ մասերուն բաղադրութիւնն չփոխուիր։ շարունակենք այսպէս և անշօշափելի փոշիի վերածենք՝ դարձեալ այդ փոշ-

ուոյն մէն մի հատը կիր, բնածուխ և ջրածին կը պարունակէ նոյն համամասութեամբ, որ ամբողջը կը պարունակէր։ Մատացածին շարունակելով մեր այս բաժանումը, կրնանք հասնիլ այնպիսի սահմանի մը, ուր անկարելի է այլ եւս բաժնել դանուած շամանդաղը առանց բնածուխն և կիրը իրարմէ բաժնելու։ Բայց հոս ուշադրութեան արժանին սա է թէ այս վիճակին մէջ բնածուխ, կիր ու ջրածին այլ եւս իրարու խառնուած չեն, այլ սոցա հիւլէները քովէ քով շարուած կը կենան և ամբողջութիւն մը կը կազմեն։

Ի՞նչ ըսել է ՀՕՀ։ Անկարելի է որ երկու մարմին քովէ քով կենան առանց իրարմէ հեռաւորութիւն մը ունենալու, որչափ ալ մօտ ըլլան։ Այս գաղափարը դուցէ գժուարահասկանալի ըլլայ, սակայն այնքան ճիշդ է և այնքան ճշմարիտ, որ ի հնուց անտի, հաղարաւոր տարիներէ ի վեր զայն ունեցած են ամէն անոնք որ մարմնոյ ներքին բաղադրութիւնը բացատրել ուզած են։

Ենթադրելով իսկ թէ տարբեր մարմին մը առնուի, ինչպէս երկաթը, երկաթին հիւլէները չեն կարող իրարու փակչիլ, այլ քիչ շատ հեռու կը կենան իրարմէ և չէթէ անոնց միջոցը պարապութիւն կը սիրէ, այլ նաեւ այդ հիւլէները որոշ շարժում մը ունին, հանդարտ չեն կենար ու կը շրջին և կը դառնան իրարու բոլորտիքը։ Մարմնոյ հիւլէներուն շարժումները դուցէ զարմանալի, անհաւատալի և անապացուցելի թուին շատերու, բայց այս ալ ոչ Վիրցի ենթադրութիւնն է և ոչ մերը, այլ քաղաքակրթութեան առաջին տարրները, երբ մարդ կոխսը խորհիլ ամէն բանի վրայ, իւր մտաց ներկայացաւ թէ անկարելի էր որ ջրածին չդանուի տիեզերաց ամենատկնդան մասին մէջ իսկ։ Ցոյն փիլիսոփայից մէջ շատերը կան որ մեզ կը բացատրեն թէ մարմնոյ հիւլէները ի՞նչ ձեւով կը շարժին։ Զենք կարող բացատրակ կերպիւ ընդունիլ սոցա ամէն բացատրները, սակայն սա համաձայնութիւնը կը տիրէ անոնց և մեր մէջ թէ, մարմնոյ ամէն մէկ շամանդաղը կազմող հիւլէները շարժում ունին, իրարու բոլորտիքը կը շրջին և պէտք է շրջին։

Նեւտոն տիեզերաց ընդհանուր շարժումները մէկ խօսքով բացատրեց, ըսելով թէ բաւական է ենթադրել որ երկու մարմին զիրար կը քաշեն։ այս պայմանին անհրաժեշտ հետեւութիւն է — չափագիտութեամբ ապացուցանելի — թէ երկու մարմին որ զիրար կը ձգեն, պարտին շրջիլ իրարու բոլորտիքը։ Արեգակին զերկիրս իրեն քաշելուն մասնեմասնիբա-կան հետեւանքն է երկրիս թաւալումն ու շրջիլը, և բաւական է որ ըսէք աստեղագէտի մը թէ մնրսրակ մը ո՛րչափ հեռու է Արեգակէն, և թէ նորա ծաւալն ու կշիռը ի՞նչ համեմատութիւն ունի Արեգական չափերուն հետ, նա կարող է երկրկենական ճշգութեամբ հաշուով դանել թէ ո՛րքան ատենէն կը շրջի այդ մարմինը Արեգական բոլորտիքը, և թէ ի՞նչ տեսակ կոր գծի վրայ կընթանայ իւր շրջանը կատարելու համար։

Արդ, անդամ մը որ ընդունինք թէ մարմին մը կազմելու համար նիւթին հիւլէները պէտք է ձգողական զօրութեամբ իրարու մօտենան, եւ օրվհետեւ բացատրեցինք ի վերեւ թէ անկարելի է այդ հիւլէներուն այնչափ մօտենալ իրարու որ պարապութիւն չմնայ իրենց միջեւ, այս պարագային յատկացնելով նաև նեւտոնի սկզբունքը, ինքնին կը հետեւի թէ ա՛ռէջ մարմնոյ հիւլէները կը շրջին իրարու բոլորտիքը և ճիշդ այնպէս ինչպէս կը շարժին երկնային մարմինները։ Ըսել է թէ փոքր տիեզերք կան երկաթի մէջ կարմրին մէջ, քարին բեկորներուն, դաւաթ մը ջրին և կաղի մը ամենափոքր քանակութեան մէջ։

Այս ենթադրութիւնը, և կամ բաւ եւս է՝ եղրակացութիւնը շատ մը բնագիտական և տարբագիտական օրէնքներ կը բացատրէ ամենայն պարզութեամբ։ Առէք կաղ մը, թխմեցէք գոց ամանի մը մէջ, և պիտի կարենաք զայն իւր առաջին ծաւալին մի-

քանի անգամ փոքր տեղ մը սեղմեցնել։ Այս կարելի՞ էր եթէ կաղին հիւլէները իրարու դպչէին։ Որ և իցէ մարմին քիչ կամ շատ ճնշականութեան ենթակայ է։ միթէ կարելի՞ էր այս եթէ նորա հիւլէները իրարու դպչէին։

Ուրիշ օրէնք։

Գիտենք թէ ջերմութեամբ մարմինները կ'ընդլայնին։ Ի՞նչ ըսել է մարմինները կ'ընդլայնին։ ո՞չ ապաքէն երբ կու բառով զայս կրնանք բացատրել, ըսելով թէ մարմնոյ հիւլէներու շարժումը կը շատնայ երբ ջերմութիւն տանք։ Ջերմութիւն և շարժում իրարու կրնան փոխուիլ։ այս յայտնի է։ Հետեւաբար երբ մարմին մը տաքցընենք, ջերմութիւնը շարժման կը փոխուի, և նորա հիւլէները կ'սկսին աւելի արագութեամբ շրջիլ ու ընդարձակել իրենց շրջանները։ այս ընդարձակմանց դումարմամբը մարմնոյն ծաւալն ալ կ'ընդարձակի։ Այս այնքան ճիշդ է, որ չկայ մարմին մը որ ջերմութեամբ չմեծնայ, կալ, հեղուկ թէ հատատուն, ամենուն համար միւնոյն է օրէնքը, թէպէտ և մեծնալու չափով կարելի է որ տարբերին։ Արդէն այս բացատրութիւնը կրնայ նաեւ ամենայն դիւրութեամբ յարմարիլ այրելու գազման, որ կ'ըզգանք տաք մարմին մը շօշափելով։ Արդարեւ տաք մարմնոյ մը շամանդաղները արագութեամբ շարժելով կը հարուածեն մարթը եթէ դպչի։

Այս ընդհանուր տեսութեանց վերայ խօսելէ վերջ, կրնանք նաեւ ըսել թէ ամէն մարմնոյ համար միւնոյնը չէ հիւլէներու շարժման արագութիւնը։ Կաղերու համար ամենէն ստոյգն է այս, որովհետեւ կաղերու շամանդաղներն աւելի ազատ են և իրարմէ շատ հեռու։ Այս կենայ ապացուցուիլ յիշելով որ եթէ կաղ մը շատ ճնշենք, նորա շամանդաղները իրարու մօտեցընելով՝ նա հեղուկի կը փոխուի։ Նոյնպէս հեղուկն ալ պաղեցնելով՝ այսինքն անկէ ջերմութիւն և հետեւաբար հիւլէից շարժում պակսեցնելով՝ կը դնանք հատատուն մարմնոյ վերածել։

Արդ, Պ. Բլօդիոս տարբագէտը, կաղերու շամանդաղներուն շարժմանց արագութիւնը չափել ուզելով գտաւ թէ օդին շամանդաղները երկվայրկեանի մէջ 485 մէթր (ըսել է թնդանօթի ռումբի մը պէս) արագութեամբ կը շարժին։ Ջրածինը՝ 1844 մէթր։

Բայց կաղեղն շամանդաղը այսչափ արագ ընթանալով մինթէ ուղիղ գծով չէ՞ն կարող ճամբանին շարունակել։ Ոչ. այնքան անթիւ են ատոնք, որ շարունակ իրարու կը զարնուին և մշատաւ ճակատամարտ մ'է որ յանհունս կը շարունակուի առանց կասդուութեան դադարի։

Բնութեան մէջ կը տեսնենք բոյսերը, և կենդանիք որ միշտ փոփոխութեանց ենթակայ են և իրենց գլխաւոր յատկութեանց մին է շարժումը, կը տեսնենք բնական երեւոյթները, երկնային մարմնոց շարժումները, հով, ծով, միշտ կը փոխուին, այս ամենը կենդանութիւն ցոյց կուտան, սակայն մեզ անկենդան երեցած ամէն նիւթեր, լեռան կոյտը կազմող հողը, ժայռը, քարը, մետաղը, Վիրցի անկենդան դիակը ինչպէս նաև զայն ծածկող ցուրտ չիրիմը, այս ամենքը իրենց շամանդաղական շարժումներն ունին և կը պահեն միշտ։ Տիեզերաց մէջ չկայ նիւթ մը, որ այս օրինաց չհամաձայնի. ամէն բանի համար ընդհանուր օրէնքն է շարժում, շարժում, շարժում։

Ց. ԵՈՒՍՈՒՖԵԱՆ

ՔԱՄԷԼԻՍ

—o—

ԱՆՑՔ ՀԱՃՕՐՈՒԼՕ

ԲԵՐԱ

Քամէլիայի վաճառատունը պատիւ ունի ծանուցանել իւր բազմաթիւ յաճախորդաց թէ Եւրոպայէն ընդունած է Ամառուան Եղանակի համար նորանոր ապրանքներ, եւ թէ, անցեալ նման, նիւթերու գոնդանութիւնը եւ ճաշակի ընտրութիւնը նշանաւոր կը հանդիսացնեն իւր վաճառատան ընդարձակ սրահները։ Ուստի սիրայօժար կը հրաւիրուին այցելութեամբ մը պատուել Քամէլիայի վաճառատունը, եղանակի նորութիւնները տեսնելու և բոլոր ուզածնին դտնելու,

Ի ՔԱՄԷԼԻՍ 6—8

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՈԼՍՈՅ ՀՐԱՊԱՐԱԿԻՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ 13—19 ՄԱՅԻՍ

ՑՈՐԵՆ. —Թէև Եւրոպայի լուրերը թոյլ են, բայց հրապարակը հոս բռնուած է։ Տեղական սպառման համար վաճառունք կը լինին։ 15,000 գրիւ լամինոտ, 6,000 գրիւ կիրգա և 3,000 գրիւ կարծր ցորեն եկաւ։ Վաճառեցաւ 3,000 գրիւ կարծր ցորեն և 15,000 գրիւ կակուղ։ Պատրաստ կայ 15,000 գրիւ կակուղ ցորեն և 6,000 գրիւ կիրգա։

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ. —Վաճառունք կը շարունակին. այս շաբթու գնորդք վճարեցին 14½–14¾–15 պատրաստ ապրանաց համար։ Հրապարակը բանուկ է։

ԳԱՐԻ.— Տեղական սպառման համար իբր 6,000 գրիւ վաճառեցաւ ի դին 12–12½ դրչ. կարծր տեսակաց և 13 կակուղներու համար, հրապարակը հանդարտ է։ Պատրաստ 10,000 գրիւ։

ՋԱՎԱՏԱՐ. —Հրապարակը թոյլ է ի դին 12¼–12½ դրչ. գրիւը։ Հանդարտ։

ԼՈՒԲԻԱ.— Պատրաստը միշտ կը պակսին, այսու հանդերձ գնողաց չկայ. գները հաստատ են։

ԲԱԿԼԱ.— Այս ապրանքին վրայ մեծ գործ չկայ դի պահանջը աննշան է։

ՍԻՍԵՌՈՆ. —Փոքր ինչ վաճառեցաւ 45 էն 55 փղ օխան լաւ տեսակաց համար. Հանդարտ։

ՓԹԱՆԱՅՈՒՆՏ. —Այս ապրանքը փոքր ինչ թուլացաւ, նոր ապրանաց համար 22½ դրչ. կ'առաջարկուի։

ՍՈՒՍԱՄ. —Շաբթուս գործերը նուազ էին, քիչ մը բան վաճառեցաւ անփոփոխ գներով։

ՓԱՆԱՐԵԱ ԵԷՄԻ. —Շաբթուս փոքր գործ եղաւ 48 փարայի։ Հրապարակը հաստատ է։

ՓԷՆՏԻՐԻ ՀՈՒՆՏ. —Նշանակուելու կարեւոր բան մը չկայ։

ԱՅԻՕՅԻ ՀՈՒՆՏ. —Հրապարակը հանդարտ է, և գիները շատ տկար։

Ա Լ Ի Ի Ր

Այս ապրանքի համար շաբաթին հանդարտ անցաւ։ Գիները թոյլ են։ Վաճառեցաւ այս շաբթու 15,000 պարկ։ Պատրաստ կայ 60,000 պարկ, որոնց 7,000 պարկը Օտէսա, 18,000 Պրայլա 35,000 տեղական։

Գ Ա Ղ Թ Ա Բ Ե Ր Բ

ՇԱՓԱՐ. —Հասաւ 3,840 պարկ։ Վաճառեցաւ 3,840 պարկ։ Պատրաստ 2000։ Հրապարակը բաւական բանուկ է, բարձրացման վախէն շատ գնողներ կան։

ԽԱՀՈՒՆ. —Հասաւ 284 պարկ։ Վաճառեցաւ 1,284 պարկ։ Պատրաստ 4,000 պարկ Հրապարակը բանուկ է և հաստատ գներով։ Այս շաբթու բաւական գործ եղաւ։

ԲՐԻՆԶ. —Հասաւ այս շաբթու 250 պարկ Անգլիական և 1,100 պարկ Իտալական։ Վաճառեցաւ 750 պարկ Անգլիական և 1,100 պարկ Իտալական։ Պատրաստ 3,500 պարկ Անգլիական և 1,000 Իտալական։ Հրապարակը բանուկ է, Իտալականները լաւ բռնուած են իսկ Անգլիականը տկար է։

ՄՈՄ. —Հասաւ 1,000 մնտուկ։ Վաճառեցաւ 1,200 մնտուկ։ Պատրաստ 1,000 մնտուկ։ Պահանջը լաւ է, և գները բարձրացած։

ՓԱՐԻԶԻ. —Հասաւ 300 տակառ Ռուսական։ Վաճառեցաւ 3,000 մնտուկ Ամերիկայի և 200 տակառ Ռուսից։ Պատրաստ 22,000 մնտուկ Ամերիկայի և 1,500 վարիլ ու 27,000 մնտուկ Ռուսական։ Հրապարակը խիստ հանդարտ. Ամերիկայի ապրանաց գները բռնուած են։

ԱՊԱԿԻ. —Հասաւ ոչինչ։ Վաճառեցաւ 1,000 մնտուկ։ Պատրաստ 13,000 մնտուկ։ Հրապարակը հանդարտ է. գիներն անփոփոխ են հոս բայց հատատուն տեղը։

ՊՂՊԵՂ. —Բարձրացած ապրանաց պակասութեան պատճառաւ։

Ո Գ Ի

ՃԼԳՈՒ. — Այս շաբթու գործերը աննշան եղան, բայց գները հաստատ են։ Հասաւ 80 տակառ։ Վաճառեցաւ 80 տակառ։ Պատրաստ 200 տակառ։

ՌՕՄ. —Վաճառունք եղան այս շաբթու։ Բայց պահանջը տկար է։ Հասաւ 250 տակառակ։ Վաճառեցաւ 150 տակառակ։ Պատրաստ 500 տակառակ։

Մ Ե Տ Ա Ղ

ԵՐԿԱԹ. —Եւրոպական հրապարակներէ եկած լուրերը կը շարունակեն անփոփոխութեան մէջ։ Հրապարակը այս շաբթու խիստ հանդարտ էր և վաճառունք անշնչան եղան։ Այս շաբթու 100 թօնօն եկաւ։ Վաճառունք 80 թօնօյի կը հանին։

ԱՆԵԱԳ.— Հասաւ ոչինչ։ Վաճառեցաւ 90 տակառակ։ Պատրաստ 30 տակառակ։ Պատրաստից նուազութեան պատճառաւ գները հաստատ և պահանջը լաւ է։

ԶԷԼԻԿ.— Հասաւ 350 մնտուկ։ Վաճառեցաւ 150 մնտուկ։ Պատրաստ 3,700 մնտուկ։ Հրապարակը բանուկ էր այս շաբթու գները անփոփոխ։

ԳԱՐՖԻՏԱՆ.— Հասաւ 1,000 տակառակ։ Վաճառեցաւ 1,000 տակառակ։ Պատրաստ 28,000 տակառակ։ Հրապարակը հանդարտ գիները անփոփոխ։

ԹԻՆԵԲԷ.— Հասաւ 210 մնտուկ։ Վաճառեցաւ 110 մնտուկ։ Պատրաստ 300 մնտուկ։ Շաբթուս վաճառունք 2 դրչ. ուէլիով եղան։

ՁԻՆԿՕ.— Հասաւ ոչինչ։ Վաճառեցաւ 140 տակառակ։ Պատրաստ 1,300 տակառակ։ Հրապարակը հանդարտ, գիները տկար են։

Մ Ա Ն Ի Ֆ Ա Թ Ո Ւ Ր Ա

ԾԱՂՈՒՏԻ. —Շաբթուս ոչ առաջին և ոչ ալ երկրորդ ձեռքէ կարեւորութեան արժանի գործ մը չէ եղած։ Գները թոյլ են։

ԼՈՆԿ ԳԼՕԹ.— Նշանակուելու ոչինչ կայ այս ապրանքին վրայ, հրապարակը հանդարտ է։

ԵՂԼԻԳԷՆ ՊԷՋ. —Մի քանի հակք վաճառեցան ի դին 4¼–4⅝ դրչ. լիպրան։

ԽԱՄ ՊԷՋ.— Մթերքը քիչ է, շաբթուս վաճառունք աննշան, բայց գները հաստատուն են, դի այս ապրանքը կը պահանջուի։

ԹԻՆԶԻԹ. —Վաճառունք աննշան եղան այս շաբթու և ըստ այնմ գները տկար են։ 16 թիւը 39–39½ և 26 թիւը 54–54½ դրչ. ի կը ձգեն։

ՊԱՍՍԱՆ. —Այս շաբթու լաւ գործեր եղան այս ապրանքին վրայ։ Վաճառեցաւ մեծ քանակութեամբ ճերմակի վրայ վար գներով ապրանքներ, լաւ և տորին քէնֆէ բայց գոյն գունէ օրն լաւ ճերմակի վրայ, և զանազան ուրիշ տեսակներ։

ՄԱՆՍԵՍԹ. —Այս ապրանաց համար պահանջը լաւ կը շարունակէ մեծ քանակութեամբ 8–14 վարէր և էքսդրա վաճառեցաւ. գները հաստատ են և պատրաստը նուազած։

Հ Ա Ն Ք Ա Ծ Ո Ւ Խ

Հրապարակը կը շարունակէ հանդարտութեան մէջ։ Գները տկար են։ Հասաւ 1,300 թօնօ Նիւգանլ։ Վաճառեցաւ 3,800 թօնօ։ Պատրաստ 13,000 թօնօ։

ԱՐՏԱԾՈՒԹԻՒՆ

ԹԻՖԹԻՒ. — Այս շաբթու վաճառեցաւ 1,100 հակ, որոց 450 հակը Էնիւրիւ, և սոր նման առաջին բայց երկրորդ կարգի ապրանք, ի դին 20½–21½ դրչ. 600 հակ երկրորդականք Պասմանսկոյու և սոր նման երկրորդական ապրանք ի դին 19–20 և 30 հակ. սորվինք Քէրով խառն ի դին 13 դրչ. օխան։ Պատրաստ 10,000 հակ։ Թէև արտաքոյ կարգի ոգեւորութիւն մը կը նշմարուի, բայց կը կարծուի թէ անտեղի է տա. դի անմիջական և ասիէ աւելի մեծ բարձրացում չկրնար ստանալ այս ապրանաց վրայ,

ԲՈՒՐԴ. —Այս շաբթու վաճառունք չեղան. պատրաստ ապրանք կը գտնուի, բայց յամախորդք կը պակսին։

ՄԵՏԱՔՍ. —Վաճառեցաւ 7 հակ Ռումելիի մետաքս ի դին 140 դրչ. օխան։ Պատրաստ 250 հակ։ Հրապարակը հանդարտ է, բայց այս տարուան բերքերու վրայ լուրերը դէշ են։ Պարսկաստանի մէջ անձրեւները և Կովկասի մէջ ցուրտերը վնասած են արտերուն։

ԲԱՄԲԱԿ. —Գները հաստատ են և պահանջը լաւ է։ Տեղական սպառման համար 200 հակի մօտ վաճառեցաւ սորվին գներով։

ՓԷՆՏԻՐ.— Այս վաճառքը խիստ հանդարտ է. միայն տեղական սպառման համար քիչ մը գործ կը լինի։

ԿԱՊԵՐՏ. —Վաճառեցաւ 220 Գարապաղ Նամաղի նոր Փրանք 27½։ 140 հատ Շիրվան Նամաղի հին 38 և 54 հատ Խիվայի կապերտ 102 Փրանք հատը։ Պատրաստ 5,500 կտոր։ Հրապարակը հանդարտ էր այս շաբթու դի լաւ ապրանք՝ որոց պահանջը մեծ է, կը պակսին։

ԱՅԻՆԹԱՊ. —Վաճառեցաւ այս շաբթու միայն մէկ կողով Պալաքլաւէր Ռէլքէլ ի դին 160 դրչ. օխան։ Պատրաստ 110 կողով։ Պահանջը լաւ է։ Հրապարակը գնողք կը գտնուին, բայց վաճառող չկայ օրուան գներով։

ՓԻՓԵՐԻ. —Վաճառեցաւ 2,500 օխա, որոց 1,500 օխա բնական ճերմակ խառնուած Նիկսէի ի դին 18½ և 1,000 օխա բնական ճերմակ ի դին 20 դրչ. օխան։ Պատրաստ 22,000 օխա։ Հրապարակը հանդարտ է, գները թոյլ։

ՄԱՆՄՈՒԶԻՆ. —12 պարկ 2բդ և տորին տեսակ խառնուած վաճառեցաւ ի դին 70–110 դրչ. օխան։

ՍԱԼԷՊ. —Այս շաբթու վաճառում չեղաւ։ Հրապարակը հանդարտ է։ Պատրաստ 1,700 օխա։

ՄԵՂՐԱՍՈՄ. —Վաճառունք չէ եղած այս շաբթու։ Պատրաստ 1,300 օխայ։ Հրապարակը հանդարտ է։

ԿԱԴԻՍ. —Եգիպտոսի համար պահանջը ինկած ըլլալով այս շաբթու նշանաւոր գործ չէ եղած. գները թոյլ են

ՃԷՔԷ. — Այս շաբթու վաճառեցաւ 4 պարկ միայն Կեռարիա ի դին 10½ դրչ. օխան։ Պատրաստ 800 պարկ։ Հրապարակը հաստատ է և պահանջ կայ բայց վաճառողք կը դժուարանին այս գներով ծախելու։

ՄԱՉԻ.— Պատրաստ 280 պարկ որոց 30ը ճերմակ և 250 պարկը սեւ. հրապարակը հանդարտ առանց գնորդի։

ՄՈՐԹ. —Այս շաբթու մորթի վրայ կարեւոր գործեր եղան։

ԳՈՄԼԵԻ ՄՈՐԹ. —Գործ չէ եղած այս շաբթու։

ԿՈՒՄՈՒ ՄՈՐԹ. —Այս շաբթու վաճառեցաւ 1300 կտոր Ռումելիի չոր մորթ, վաճառեցաւ ի դին 9¾ դրչ. օխան.

ԱՅՏԻ ՄՈՐԹ. —Այս շաբթու մաս մը ապրանք վաճառեցաւ ի դին 19–20 դրչ. զոյգը։

ՈՁԻԹԱՐԻ ՄՈՐԹ. —Այս շաբթու վաճառում չկայ։

ԳԱՌԱՆ ՄՈՐԹ. —Վաճառեցաւ այս շաբթու 15,000 կտորի չափ տեղական ապրանք ի դին 17 դրչ. զոյգը։

ԸՆԹԱՑԻԿ ԳԻՆԵՐ

Ցորեն Կիրգա Ռուսից	Լիպրայ	57—59	Դրչ. 22¾— 24	Փիլէն
» » Դանուբի	»	57—59	» —	»
» Կակուղ Կալաց և Պրայլա	»	57—59	» 19 — 22	»
» » Պուլղարիոյ	»	57—58	» 20 — 21	»
» » Բուռմէլի	»	57—58	» 20 — 21½	»
Եգիպտացորեն, Կալաց, Խանայիլ և Օտէսա			» 14¾— 15	»
» » Օրոռ և Տաճիական			» 14 — 14½	»
Գարի կակուղ			» 12½— 13	»
» հատ			» 12 — 12½	»
Զաւտար			» 12¼— 12½	»
Բիթանհունտ (քէմէն թօհումը)			» 22½— 23	»
Գանար եէմի			Փղ 47 — 48	Օխայ
Նօխուտ Պալիքէսէր			» 40 — 55	»
» Անթէնք			» 45 — 55	»
Բէնտիրի հունտ			» 55 — 65	»
Պալլա			» 27 — 28	»
Սուսամ Մուտանիա Պալիքէսէր			» 90 — 95	»
» Մէրսին			»100 —105	»
Անֆիոնի հունտ			» 55 —	»
Լուբիա Օրոռ			»125 —135	100 »
» Դանուբ			»135 —146	» »
Օտէսա Ս. Ալիւր			Դրչ. 124 —130	Պարկը
» Բ. »			» 110 —116	»
» Գ. »			» 90 — 94	»
Ադամա			» 95 —	»
Պրայլա տիպիկանի հեռ խառնուած			» 78 —	»
Պրայլա			» 80 —	»
Վառնա			» 74 —	»
Շումլնաբիէր			» 76 — 77	»
Խահֆիէ			Դրչ. 740—780—850	Օխայ 100 ոսկին
Լեղակ սէնիալ			» 80—110	» » »
» Փուրբայ			» 60— 80	» » »
Որդան կարմիր սեւ			» 19— 20	» » »
» կարմիր թուխ			» 15— 16	» » »
Բիլբէր			» —11¾	» » »
Կինամոն (դարչին)			» 5½— 6	» » »
Գարէնֆիլ			» 9—10	» » »
Թէյ սեւ տորին			» 12— 16	» » »
Թէյ առաջին և լաւ			» 29— 33	» » »
Շաքար Հոլանտայ			» 168—170	կենդինարը 103 »
» Դրիւնսթէ Ա. (պարկի մէջ)			» 165	» » »
» » Բ. (»)			» 154	» » »
» » Գ. (»)			» 148	» » »
Մեղրամոմ			» 34—35	» 100 »
Խունկ (Գիւնկիւլը)			» 220—240	» » »
Բրինձ Իտալիայ Ա. Ռիզոն		Ֆրանգ	47½—	Պարկը » »
» » Բ. »			» 46½	» » »
» » Ասոսրական			» 42	» » »
» » Բ. »			» 39	» » »
» » Գ. »			» —	» » »
» Հնդկական			Դրչ. 126—131—133	» » »
Գօլա Գաղիական			» 3¾	Օխայ » »
» Անգլիական			» 178	Մնտուկը »
Մոմ			Դրչ. 7¾	Գիլօ » »
» Գաղիական			» 94—	» »
Կազ Ամերիկայի մնտուկ			» 34½—37	» » »
» Ռուսից			» 35—35	» » »
» » (վարիլի մէջ)			Փարայ 45	Օխայ » »
Ոդի Ռուսից Օլաուօֆքա			Օխայ 25 —	1 Ոսկւոյ
» » Սոտինոքի			» 25 —	»
» » Խարքով			» 27½—	»
» Վար տեսակ Սէլանիկ Լայն			» 29 — 35	»
Ոսմ Թրիէսթէ			Կղլոն 13½	»
Անգլից			» 9—9¼	»
Անգլիական երկաթ (չուպուգ)			» 45½	կենդինարը
» Երկաթ (սէմէտ)			» 45½	»
Շուէտի » (չուպուգ)			» 78 —80	»
» » (սէմէտ)			» 81	»
Տախտակ» (Սամ) թիւ 1— 4			» 65 —	»
» » » » 5—10			» 71 —	»
» » » » 11—14			» 80 —	»
Կղզի			» 90	»
Զէմիկէր սովորական			» 61	»
» Մեծ դիզք			» 65 —67	»
Անագ (գալայ)			» 625—630	»
Կապար (սաչմա)			» 112	»
» Տախտակ			» 120—	»
» Խողովակ			» 110—	»
Զէյլէք			Դրչ. 128—132	Մնտուկը
Գարմիլցա		45 դիլոնոց	» 58— 62—	Վարիլը
Թէնեքէ			» 187—	2 Մնտուկը
Պղինձ			» 12 –12¼	Օխայ »
Ճինկօ			Ֆրանգ 70—	100 Օխայ
Հանդածուխ Նիւգասլ (ի վաճառատուն)			· 21 Շ. 0 Բ. —	Շ. 0 Բ. Թօնօն
» » » (Ծովու վրայ)			· 22 » 6 » —	23 » 6 » »
» » Գարտիֆ (ի վաճառատուն)			· 23 » 0 »	24 » 0 » »
» » » (Ծովու վրայ)			· 26 » 0 » —	27 » 0 » »
» » Հարթլբուլ			· 18 » 0 » —	19 » 0 » »
Լիվերբուլ			· 16 » 0 » —	17 » » »
Մահուտի			Դրչ 6 — 6½	Լիպրան Ոսկի »
Ամերիկան ամբողջ եարտա			» 5½— 6	» » »
» պակասաւոր			» 4 —5½	» » »
Ամերիկու (լոնկ դլոթ) լաւ տեսակն			» 4—5	» » »
» » » փոքր լիպրա			» 5– 5¼	» » »
» » » Ներկուելու (գօրինքթն)			» 5⅜– 5½	» » »
Եէլքէն պէզի լաւ տեսակ			» 4½– 4⅜	» » »
» » միջին տեսակ			» 4¼– 4⅜	» » »
» » սորին			» 4⅝–	» » »
Թամ մատամէօլ (չրքթինկ) լաւ տեսակ			» 84 82	Թօխը »
» » » միջին »			» 50 60	» » »
» » » միջին »			» 60 68	» » »
Մէլ 4 թիւ (չափալը) 3 թօխը (30–35–38 ինչ.)			Դրչ. 42½	» 112
» 16 » (թէնդիք)			» » ( ) » 38¾—39½	» »
» 26 » (Ալօչիա)			» » ( ) » 54—54½	» »
Մանած վաթէր			4—14 Դրչ. 36—42	փաքէթը » 106
» »			18—23 » 45—48	» » »
» Եքսդրա (Ֆիլիմինկ)			4—14 » 40—54	» » »
» » ( )			18—28 » 43—59	» » »
» Եքսդրա գրօսիթօն			16—24 » 65—66	» » »
» Մամի			8—14 » 55—57	» » »
» »			20—24 » 67—71	» » »
» Կարմիր Խոպլիոյ			4—14 լաւ » 75—86	» » »
» » »			»— երկրորդ » 55—65	» » »
» » Զուլիպերիոյ թիւ			20 » 63—75	» » »
» » Խոպլիոյ			» » » 80—87	» » »
Թրիֆոլք առաջին տեսակ			Դրչ 21½—22	օխայ 100 ոսկի
» երկրորդ »			» 19—21	» » »
» սորին »			» 6 — 13	» » »
» վան			» 13 — 14	» » »
Բուրդ Քասապ պաչի Ա.			» 8 — 8½	» » »
» » Բ.			» 6 —6½	» » »
» Քըրման Ա.			» 6¼– 6¾	» » »
» » Բ.			» 4 – 4½	» » »
Մետաքս Խօքանտ			» 182 —205	» » »
» Նուխի			Ֆրանք 33 — 41	» » »
» Ռէշտ			» 26 — 32	» » »
Բամբակ Հալէպ			Դրչ 5½—5¾	» » »
» Սամսուն			» 6¼—6½	» » »
» Իզմիր և Հրչակայք			» 6¾– 7½	» » »
Սֆիլյոն Մարաթիա			» 240 250	» » »
» Սէլանիք			» —	» » »
» Զիլէ Թօքաթ			» 200— 220	» » »
» Պալիքէսէր			» 175 180	» » »
» Էնկլիւրիւ			» 160 —170	» » »
» Նալը խան Պէյ պազար			» 160 165	» » »
» Կէյրէ Պիլէճիք			» 160 165	» » »
» Զըքնիթ			» 110 —135	» » »
Գիմիրլ առաջին ճերմակ			» 27 28	» » »
» ավելաւուած ճերմակ			» 24 25	» » »
» լաւ բնական »			» 21 —	» » »
» սովորական »			» 19 — 20	» » »
» լաւ դեղին			» 17 — 18	» » »
» երկրորդ դեղին			» 15 16	» » »
» Զամբ			» 3 — 4	» » »
Սալէր լաւ տեսակ			» 16¼– 17	» » »
» երկրորդ տեսակ			» 15 — 16	» » »
Մահմուդիյէ առաջին ճերմակ			» 220 —240	» » »
» երկրորդ			» 100 120	» » »
» երրորդ			» 60 — 80	» » »
Մեղրամոմ լաւ տեսակներ			» 20 23	» » »
» սորին »			» 19 — 20	» » »
Կաղին Տրապիզոն			» 125 —	կենդինար »
» Գէբասանի			» 120 —	» » »
Ճէնրի Էլին			» 10½—	Օխայ »
» Քայսար			» 10½—	» » »
» Անկորա			» 9½– 10	» » »
» Թօքաթ			» 9¼–9¾	» » »
» Զօրում			» 9–9¼	» » »
» Վար տեսակներ			» —	» » »
Եղջիւր			» 5 5½	» »
Մորթ գոմէշի չոր			» 9¼ 9½	» »
» թաց			» 6¼—6½	» »
» կովի չոր			» 9¼—9½	» »
» թաց			» 6¼—6½	» »
» Ոչխարի			» 18 — 26	» »
» Այծի			» 18 — 20	» »
» Գառին			» 16 —18½	» »
» Այծուկի			» —	» »
» Նաղաստակի			» —	» »

ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏ ՄԸ

Պ. Ա. Բուք հետեւեալ միջոցը ցոյց կուտայ միջատները վանելու համար։ Երկու լիտր աճառի վրայ լինն լիտր ջուր աւելցնելով, տաքցուր թթու (Ասիդ Քէնիք) մինչեւ որ եռայ, ապա վրան աւելցուր կէս լիտր փինան։ Բաղադրութիւնը կատարեալ է, կրնաս զայն տակառի մէջ պահել և ի պահանջել հարկին սոյն նիւթէն մաս մը առնելով անոր 30 անգամ ջուրի մէջ խառնել, և ջրել այն կաղամբի և բոզկի արտերը չորս որդեր և ճճիք կապտակին։

ԴԱՐՆԱՆ ՄԻ ԱՍՈՒՊ

ՆՈՐԱՎԷՊ

Գրեց. Օր. ՄԱՌԻ

Զմիւռնիա, Տպագրութիւն Մ. Մամուրեան. կը գտնուի Պոլսոյ հայ գրավաճառաց քով։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Թ. ԹԵՐԶԵԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՊԱ-ԿԵՐԱԶԱՐԴ

Գին 3 դահեկան

Վարժարանաց և շատ գնողներու համար մանաւոր զեղչ կը լինի։

Կը գտնուի ամէն գրավաճառաց քով. կեդրոնատեղին է Հայոց Միացեալ ընկերութեանց դրատունը, Կալաթա, Կէօլէ օղլու խան թիւ 12։

Այս դասագրքին վաճառումէն գոյացած շահուն մի մասը Հայոց Միացեալ ընկերութեանց յատկացեալ է։

ԱԶԳ

Ընտանիք մը կայ, որոյ հայրը Ազգին բազմաչխատ և արդիւնաւոր դասատուներէն մին է, և որոյ անդամք կարող են երկսեռ վարժարանի մը ուսանելեաց գրեթէ մեծագոյն մասն աւանդել, և մաքուր գիր և ընտիր ասղնեգործութիւն ալ սովրեցնել, կը յուսացուի թէ սոյն ընտանիքն կրնայ օգտակար լինիլ դաւառի մը։

Պէտք ունեցողը կը հրաւիրուի առխարգրութիւն լրագրոյս։

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ
ԻՄԱՑԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՑՈՒԹԵԱՆ

Աչխատասիրեաց

Տ. ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿ. ՄԻԽԻԹԱՐԵԱՆ

Զմիւռնիա—Տպագրութիւն Տէտէեան
Գին 7 դահեկան արծաթ։

Աւրոնատէր, Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԱՐԵՏ
Կալաթիա, Գիւրքճիքեր փողոց, թիւ 41.